

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԵԿՈՒՅՑ

ԵՊՀ զարգացման
ոազմավարական ծրագրի
(2010-2014 թթ.)
իրականացման վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| ՆԱԽԱԲԱՆ | 5 |
| ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ | 6 |
| I. Բարձրորակ կրթություն | 6 |
| II. Բարձրակարգ հետազոտություններ և նորարարություն | 19 |
| III. Հանրային ներգրավում և ծառայություններ | 25 |
| ԱԶԱԿՑՈՂ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ | 31 |
| IV. Որակյալ կադրային ներուժ | 31 |
| V. Որակյալ ենթակառուցվածքներ | 35 |
| VI. Որակյալ ծառայություններ | 40 |
| ԸՆԹԱՑԻԿ ԳԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՆՔԲԵՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ | 44 |
| VII. Ընդունելության բազմազանեցված մուտք և համապատասխանություն | 44 |
| VIII. Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում | 49 |
| IX. Ռազմավարական գործակցություն և միջազգայնացում | 59 |

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով (ՌՕ) հնգամյա ժամանակահատվածում նախատեսված էր 9 ռազմավարական նպատակների իրականացման համար լուծել 29 խնդիրներ, որոնք նպատակաուղղված էին ԵՊՀ-ում բարձրորակ կրթության ապահովմանը, բարձրակարգ հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, որակյալ ենթակառուցվածքների ստեղծմանն ու բարելավմանը, որակյալ կադրային ներուժի կատարելագործմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցված մուտքի ընդլայնմանը և համապատասխանության բարձրացմանը, ֆինանսական կայունությանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը, ռազմավարական գործակցության ամրապնդմանն ու գործունեության միջազգայնացման խթանմանը: ՌՕ իրականացման ժամանակացույց-պլանով սահմանվել էին այդ խնդիրների համապատասխան գործողությունների կատարման ժամկետները՝ ըստ ուսումնական տարիների և կիսամյակների, ինչպես նաև կատարող կառույցները և պատասխանատու անձինք:

Ամփոփելով ԵՊՀ գործունեությունը հնգամյա ժամանակաշրջանում՝ ստորև ըստ առանձին ռազմավարական նպատակների ներկայացվում է ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

I. Բարձրորակ կրթություն

Դառնալ տարածաշրջանի առաջատար բուհերից մեկը, պահպանել կրթական բարձր չափանիշներ և հնարավորություն տալ սովորողներին՝ լիարժեք կերպով իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող ձևուն ուսումնական ծրագրեր:

Այս նպատակի իրագործման համար սահմանված հինգ խնդիրներից յուրաքանչյուրի ուղղությամբ 2010-2014 թթ. կատարվել են համապատասխան աշխատանքներ, որոնք ներկայացվում են ստորև:

Խնդիր I. ա) Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ արդի միջազգային ծրագրային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջմունքներին համահունչ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- 2012 թվականից սկսած, Կրթության և գիտության նախարարության (ԿԳՆ) հետ համատեղ, բուհերում սկսվել է մասնագիտությունների ցանկի վերանայման գործընթացը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Նպատակն է մասնագիտությունների խոշորացումը, ճանաչելիությունը եվրոպական կրթական տարածքում, ինչպես նաև շնորհվող որակավորումների ճշգրտումը: ԵՊՀ-ն մասնակցել է այդ աշխատանքներին և քննարկումներին ԿԳՆ-ում և Ազգային ժողովում: Մասնագիտությունների ճշգրտված ցանկը նախատեսվում է հաստատել 2015 թվականին և կիրառել 2016 թ-ից:
- ԵՊՀ շրջանավարտներից և կրթական ծրագրերից հիմնական գործատու կազմակերպությունների բավարարվածության վերաբերյալ ուսումնասիրությունները սկսվել են 2012 թ-ից: Առաջինը

ուսումնասիրությունն իրականացվել է մի քանի մասնագիտությունների գծով՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ, իրավագիտություն, սոցիալական աշխատանք, տնտեսագիտություն, ռադիոֆիզիկա, ժուռնալիստիկա և դեղագործություն: Այս ուղղությամբ աշխատանքները պետք է շարունակվեն էլ ավելի համակարգված՝ ներառելով բոլոր մասնագիտությունները:

- Մշակվել, ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատվել և ֆակուլտետներին է տրամադրվել «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշները» և կրթական ծրագրերի մասնագրերի կազմման ձևաչափն ու չափանիշները: Այս փաստաթղթերում սահմանված են ԵՊՀ որակավորման աստիճանների և մասնագիտությունների էլքային կրթական արդյունքների ձևակերպման մոտեցումները: Ֆակուլտետները, համաձայն այդ պահանջների, կազմել են իրենց մասնագիտությունների մասնագրերը, որտեղ սահմանված են այդ ծրագրերի և նրանց բաղադրիչ դասընթացների կրթական վերջնարդյունքները՝ գիտելիքների, հմտությունների և կարողությունների տեսքով: Դրանց գնահատման համար մշակվել են համապատասխան մեթոդներ և չափանիշներ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- ԵՊՀ շրջանավարտներից և կրթական ծրագրերից հիմնական գործատու կազմակերպությունների բավարարվածության վերաբերյալ հարցումներ իրականացվել են միայն մի քանի մասնագիտությունների գծով: Արդյունքում, չեն մշակվել երաշխավորություններ ծրագրերի արդիականացման և շրջանավարտների աշխատանքի անցնելու կարողությունների բարձրացման վերաբերյալ, ինչը բացատրվում է նաև ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների բացակայությամբ:

Խնդիր I. բ) Ներդնել որակի ներքին հավաստման համակարգ՝ եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- 2012 թվականին մշակվել և ընդունվել է Համալսարանի որակի ներքին հավաստման (ապահովման) համակարգի նոր հայեցակարգը՝ որակի շարունակական բարելավման ռազմավարության, համապատասխան ընթացակարգերի, կազմակերպական կառուցվածքի ընդգրկմամբ և կառավարման կառույցների ու կառուցվածքային միավորների պարտականությունների և գործառույթների սահմանմամբ: Ստեղծվել է ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը, ԵՊՀ գիտական խորհրդի կողմից ընդունվել և հաստատվել է կենտրոնի կանոնադրությունը: Միաժամանակ ստեղծվել են գիտական խորհրդի ՈԱ մշտական հանձնաժողովը և ֆակուլտետների գիտխորհուրդների ՈԱ հանձնաժողովները:
- 2012 թ. մշակվել է «ԵՊՀ հաստատութենական (ինստիտուցիոնալ) հավատարմագրման ինքնագնահատման ուղեցույցը»: Ուղեցույցում (ձեռնարկում) ներկայացված է հավատարմագրման գործընթացը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում, մասնավորապես Երևանի պետական համալսարանում, ինչպես նաև նկարագրված է ինքնագնահատման գործընթացը: Հաշվի առնելով միջազգային փորձը՝ տրված են նաև խորհուրդներ և երաշխավորություններ արդյունավետ զեկույց պատրաստելու համար:
- 2012-2013 թթ. ԵՊՀ-ում Նիդերլանդների հավատարմագրման կառույցի անմիջական մասնակցությամբ իրականացվեց ինստիտուցիոնալ և փորձնական ծրագրային հավատարմագրում: Այդ նպատակով համալսարանը նախաձեռնեց ինքնագնահատման գործընթաց՝ գնահատելու համար իր գործունեության արդյունավետությունը բոլոր հիմնական ոլորտներում՝ վեր հանելու ձեռքբերումները, առկա թերություններն ու բացթողումները, ինչպես նաև նախանշելու դրանց վերացման ուղիները: Կազմվեց ԵՊՀ ինքնագնահատման զեկույցը, որը հրապարակվեց և տարածվեց ԵՊՀ

ներքին և արտաքին շահակիցների շրջանում և ներկայացվեց միջազգային փորձագիտական խմբին: Խումբը փորձագիտական այց կատարեց համալսարան՝ իր վերջնական գնահատականը տալու նպատակով: Փորձագիտական խմբի ղեկավար, Բրյուսելի համալսարանի նախկին ռեկտոր Բեն Վան Կամպը և խմբի անդամները փաստեցին ողջ գործընթացի բարձր կազմակերպվածությունը, անմիջական և անկաշկանդ շփումները ուսանողների և դասախոսների հետ, ինչպես նաև նրանց պատրաստվածությունն ու իրազեկվածությունը: Այցից հետո փորձագիտական խումբը ներկայացրեց իր զեկույցը՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման վերաբերյալ: Փորձագիտական խումբը պետական հավատարմագրման 10 չափանիշներից 9-ի գծով ԵՊՀ գործունեությունը դրական է գնահատել: Անբավարար է գնահատվել միայն գիտահետազոտական գործունեությունը՝ կրթության և հետազոտության անբավարար կապի և հումանիտար գիտություններում միջազգային հրապարակումների սահմանափակ քանակի պատճառով: Փորձագետները, ամփոփելով ԵՊՀ գործունեության ձեռքբերումները և բացթողումները, առաջարկել են նաև համալսարանի հետագա արդյունավետ գործունեությանը միտված երաշխավորություններ:

- Մշակվել և հաստատվել են կրթական ծրագրերի մշակման, արտոնման, ներքին փորձաքննության, հաստատման, տարեկան մոնիթորինգի և պարբերական վերանայման ներքին չափանիշները, ընթացակարգերը և կարգերը, որոնք այժմ դրվում են գործածության մեջ:
- Մշակվել է «ԵՊՀ ուսանողի գնահատման ուղեցույցը», որտեղ ներկայացված են ուսանողների արժանահավատ և հուսալի գնահատման մոտեցումները՝ հիմնված ուսումնառության վերջնարդյունքների վրա: Կազմակերպվել են ԵՊՀ դասախոսական կազմի (սահմանափակ թվով) վերապատրաստումներ սույն գնահատման մեթոդաբանության ուսուցման նպատակով: Կրթական ծրագրերի մասնագրերում ներկայացված են ուսանողների գնահատման արդյունահեն չափանիշները:

- Մշակվել է «ԵՊՀ դասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման ղեկավար ձեռնարկը», որտեղ ներկայացված են դասախոսի գործունեության երեք հիմնական ոլորտներում՝ կրթություն, գիտություն, հանրային ներգրավում, նրա կատարողականի բազմաչափ գնահատման (ուսանողների, գործընկեր դասախոսների, անմիջական ղեկավարի և իր կողմից) չափանիշները, ընթացակարգերը և մեխանիզմները: Ներկայումս գնահատումն իրականացվում է միայն ուսանողական հարցումներից ստացված տվյալների հիման վրա:
- Մշակվել, ներդրվել և կիրառվում է ուսումնական գործընթացի կազմակերպման և կառավարման Վեբ հենքով էլեկտրոնային տեղեկատվական «SuperVision» ծրագիրը: Այն թույլ է տալիս ավտոմատացված անցում իրականացնել ուսումնական պլաններից ուսումնական աշխատանքային պլաններին, դրանց հիման վրա կազմել ամբիոնային բեռնվածությունները, դյուրացնել դասատախտակների կազմման գործընթացը, ավտոմատ կազմել ուսանողական հարցումների համար օգտագործվող հարցաթերթերը և ամփոփել արդյունքները, պահպանել և ընդլայնել ուսանողների տվյալների բազան, վերահսկել ուսանողների առաջադիմությունը, որն օգտագործվում է փոխատեղման և զեղչերի տրամադրման ժամանակ: Ծրագիրը հնարավորություն է ընձեռում նաև ավտոմատ կերպով պատրաստելու դիպլոմի համաեվրոպական նմուշի հավելվածը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Չնայած մշակվել և հաստատվել են կրթական ծրագրերի մշակման, արտոնման, ներքին փորձաքննության, հաստատման, տարեկան մոնիթորինգի և պարբերական վերանայման ներքին չափանիշները, ընթացակարգերը և կարգերը, սակայն դրանք դեռևս մասամբ են կիրառվում ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում:

- Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների ամենամյա գնահատման գործընթացը դեռևս չի կիրառվում Համալսարանում: Ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային ռեսուրսային ապահովվածության մեխանիզմները դեռևս մշակված չեն:

Խնդիր I. գ) Ապահովել կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառությունը Համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Իրականացվել է կրթական ծրագրերի կրեդիտային հենքով վերակառուցում՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական աստիճաններում, սակայն դեռևս բավարար չափով չի ապահովվել ծրագրերի ճկունությունն ու կամընտրական դասընթացների մասնաբաժնի ավելացումը առաջին՝ բակալավրի, աստիճանում:
- Կրեդիտային համակարգի ներդրման և ծրագրային վերակառուցման արդյունքում՝ հիմնավորված կերպով կրճատվել է ուսանողի լսարանային բեռնվածությունը, ինչը հնարավորություն է ընձեռել ավելացնելու ուսանողի ինքնուրույն աշխատանքի աշխատածավալը: Սակայն այս հնարավորությունը լիարժեք օգտագործելու համար անհրաժեշտ է էապես վերանայել նաև գործող դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները:
- ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2011 թ. հաստատված «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» և ԵՊՀ ռեկտորի «Ուսումնական խորհրդատուների (կուրատորների) աշխատանքը կազմակերպելու մասին» հրամանով (27.07.2010 թ.) սահմանվել են կուրատորների աշխատանքի կազմակերպման պահանջները և նրանց պարտականությունները: Ըստ այդմ, ուսումնական խորհրդատուներ (կուրատորներ) են նշանակվել ֆակուլտետի առավել փորձառու, հիմնական դրույքով աշխատող դասախոսները: Յուրաքանչյուր

ուսումնական տարվա վերջում ֆակուլտետի խորհուրդը լսում և գնահատում է նրանց հաշվետվությունները: Կուրսատորների աշխատանքը հաշվարկվում է նրանց բեռնվածության մեջ և վճարվում համապատասխան չափով:

- Ըստ կրեդիտային բեռնվածության՝ ուսման վարձերի վճարումը իրականացվում է համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» (27.12.2011): Սակայն ՀՀ բարձրագույն կրթության օրենսդրական դաշտի անկատարության հետևանքով դեռևս հնարավոր չի եղել ներմուծել մասնակի բեռնվածությամբ ուսումնառություն:
- Զգալի աշխատանք է կատարվել հեռակա ուսուցման համակարգում կրեդիտային համակարգի գործադրման համար: Այդ նպատակով մշակվել և ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատվել են «ԵՊՀ-ում հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» և «ԵՊՀ-ում հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» (2008 թ. և 2009 թ.) մեթոդական փաստաթղթերը: Հաստատվել է նաև «Կրեդիտային համակարգով հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը», որը միասնական նորմատիվային, կանոնակարգային և կազմակերպական հենք է ձևավորել հեռակա ուսուցման համակարգում բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերը կրեդիտային համակարգով իրականացնելու համար: ԵՊՀ ասպիրանտուրայի հետազոտական ծրագիրը վերակառուցվել է հետազոտողի գիտակրթական ծրագրի, որն արդեն իսկ իրականացվում է կրեդիտային համակարգով: Այդ նպատակով մշակվել և ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատվել են «Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը» հետազոտողի պատրաստման ծրագրի համար, «Երևանի պետական համալսարանում հետազոտողի պատրաստման (ասպիրանտուրայի) գիտակրթական ծրագրի

կառուցվածքը և բովանդակությունը», «Հետազոտողի գիտակրթական ծրագրով ուսումնառող ասպիրանտների ամփոփիչ ասեստավորման և աստիճանաշնորհման կարգը», «Ասպիրանտի ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանը» փաստաթղթերի փաթեթները: Կատարված աշխատանքների շնորհիվ ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերի ասպիրանտների ուսուցումը ևս կազմակերպվել կրեդիտային համակարգով: ԵՊՀ դասախոսների որակավորման բարձրացման ծրագիրը նույնպես անցել է կրեդիտային համակարգի: Այդ նպատակով ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատվել են «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» և ԵՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգը:

- ECTS կրեդիտային համակարգի, ինչպես նաև համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելվածի ներդրումը Համալսարանում նպատավոր պայմաններ են ստեղծել եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների շարժունության ակտիվացման համար: Սակայն այս բնագավառում կան նաև ուսանողների շարժունությունը սահմանափակող խոչընդոտներ, որոնց թվում կարելի է նշել շարժունության միջազգային ծրագրերում ՀՀ բուհերի ընդգրկման ցածր մակարդակը, որը խիստ սահմանափակում է շարժուն ուսանողների ֆինանսավորման աղբյուրները և հնարավորությունները, ինչպես նաև ԵՊՀ-ի և եվրոպական բուհերի կրթական ծրագրերի բովանդակությունների որոշակի տարբերությունները: Արդյունքում, չնայած տարեցտարի ԵՊՀ շարժուն ուսանողների հաշվեկշռի նկատվող աճին, դեռևս այն մնում է ցածր:
- ԵՊՀ-ում կրեդիտային համակարգի ամբողջական կիրառմանը դասախոսներին և ուսումնական վարչակազմին նախապատրաստելու նպատակով, ի թիվս այլ գործողությունների, մշակվել և իրականացվել է վերապատրաստման դասընթաց՝ «Ուսումնական գործընթացի կազմակերպման կրեդիտային համակարգ» թեմայով: Ընդ որում, դասընթացը տարբերակված են եղել ըստ թիրախային

խմբերի՝ դասախոսների, մագիստրոսական ծրագրերի ղեկավարների, փոխղեկանների և ուսումնամեթոդական վարչության աշխատակիցների համար (շուրջ 400 ունկնդիր): Միաժամանակ ապահովվել է ԵՊՀ ֆակուլտետների դասախոսների և վարչական կազմի մասնակցությունը ԵՊՀ-ից դուրս՝ բուհական համակարգում կազմակերպված նմանատիպ տարբեր դասընթացների: Համալսարանի առկա և հեռակա ուսուցման ձևերում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար լրամշակվել և հրատարակվել են միասնական ֆակուլտետային «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական փաթեթները և դրանց լազերային սկավառակները, որոնք պարունակում են ուսանողներին անհրաժեշտ տեղեկատվությունն իրենց ուսումնառությունը կրեդիտային համակարգով կազմակերպելու համար:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- ԵՊՀ կրթական ծրագրերում (հատկապես՝ բակալավրի կրթական աստիճանում) դեռևս ցածր է ընտրովի դասընթացների հաշվեկշիռը, ինչը փոքրացնում է ծրագրերի ճկունությունը: Այդ իսկ պատճառով դեռևս չեն կիրառվում դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար առցանց (On-line) գրանցման ընթացակարգեր:
- ԵՊՀ-ում յուրաքանչյուր կիսամյակ անցկացվող դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներում ուսանողները մատնանշում են ուսումնական խորհրդատուների աշխատանքի թերությունները և ակնկալում ավելի մեծ կազմակերպվածություն և ջանակություն:
- Համալսարանի կրթական ծրագրերի և դասընթացների տեղեկագրքի անգլալեզու տարբերակը դեռևս չի ստեղծվել, ինչը նվազեցնում է ԵՊՀ-ի կողմից առաջարկվող կրթական ծրագրերի տեսանելիությունը միջազգային ասպարեզում:

Խնդիր I. դ) Ստեղծել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- ԵՊՀ-ն 2010 թ-ից ներդրել է դասախոսական կազմի որակավորման բարձրացման նոր՝ «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը», որը ներառում է հատուկ դասընթացներ՝ միտված զարգացնելու դասախոսների հմտությունները դասավանդման, ուսումնառության և գնահատման նոր մեթոդների կիրառման ասպարեզում (Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ, Կրթական ծրագրերի որակի ապահովումը և ուսանողների ու դասախոսական կազմի գնահատումը, Ուսումնական ծրագրերի մշակումը և այլն): Այնուամենայնիվ, հատուկ այս նպատակին ծառայող կենտրոնը դեռևս չի ստեղծվել և համալսարանի ջանքերն այս ասպարեզում ուղղված են համապատասխան փորձ և կարողություններ ունեցող եվրոպական բուհերի հետ համատեղ ծրագրի շրջանակներում դրա իրականացմանը:
- ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության արդյունավետության և որակի գնահատման արժանահավատությունը և հուսալիությունը բարձրացնելու նպատակով մշակվել է «ԵՊՀ դասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման ղեկավար ձեռնարկը», որը սահմանում է համապատասխան չափանիշներ և ընթացակարգեր դասախոսական կազմի բազմաչափ գնահատման համար: Դասախոսական կազմի բազմաչափ գնահատման նոր մշակված չափանիշներում ներառված են դասավանդման նորարարական մեթոդների և էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը խթանող չափանիշներ, որոնք, սակայն, դեռևս չեն կիրառվում: Սահմանված է նաև տարբեր տարակարգերի դասախոսների գնահատումը գործունեության երեք հիմնական՝ կրթության, հետազոտության և հասարակական/վարչական

ուղորտներում: Այդ նպատակով մշակվել են գնահատման հատուկ ռուբրիկներ: Գնահատումն իրականացվում է բազմաչափ սխեմայով՝ ինքնագնահատման, ուսանողական հարցումների, անմիջական ղեկավարի և գործընկեր դասախոսների գնահատման արդյունքների հիման վրա: ԵՊՀ դասախոսների կրթական և գիտամանկավարժական գործունեությունը խթանելու նպատակով համալսարանում նաև գործում է դասախոսների տարբերակված հավելավճարների համակարգ:

- Ուսանողների գնահատման գործընթացն ավելի արդյունավետ և օբյեկտիվ դարձնելու նպատակով մշակվել է «ԵՊՀ ուսանողի գնահատման ուղեցույցը», որտեղ ներկայացված են կրթական վերջնարդյունքների հիման վրա կատարվող գնահատման մեթոդաբանությունը և դրա գործնական կիրառման մոտեցումները: Այս նպատակով իրականացվել են նաև սահմանափակ թվով դասախոսների վերապատրաստումներ, որոնք պետք է ավելի ընդլայնվեն և ընդգրկեն ողջ դասախոսական կազմը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Դասավանդման և ուսումնառության աջակցման համահամալսարանական կենտրոնը դեռևս չի ստեղծվել, ներդրված չեն նաև մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները:
- Դասախոսական կազմի ամենամյա բազմաչափ գնահատման գործընթացները և չափանիշները դեռևս ներդրված չեն:
- Ուսանողների գնահատումը դեռևս չի իրականացվում կրթական վերջնարդյունքների հիման վրա սահմանված գնահատման չափանիշների օգնությամբ:

Խնդիր I. Ե) Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը Համալսարանի ուսումնական գործընթացներում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Համալսարանի ֆակուլտետներից հինգում (ֆիզիկայի, դեղագիտության և քիմիայի, մաթեմատիկայի և մեխանիկայի, աշխարհագրության և երկրաբանության, ռադիոֆիզիկայի) ստեղծվել են տարբեր մասնագիտությունների գծով վիրտուալ լաբորատորիաներ: Համալսարանի տարածքում գործող համակարգչային լսարանները (շուրջ 40 լսարան) ապահովված են ինտերնետ կապով, որոնք թույլ են տալիս իրականացնել ուսուցում առցանց եղանակով:
- Ստեղծվել են էլեկտրոնային ծրագրային գործիքամիջոցներ, որոնք ենթադրում են դասընթացների բազայի պարբերական թարմացում, թեստերի և օժանդակ նյութերի ավելացում և բազմազանացում, հարցաշարերի մշակում և այլն: Սա կարևոր խթան կարող է հանդիսանալ նաև նոր պայմաններում դասախոսների զբաղվածության, ինչպես նաև նրանց խրախուսման միջոցների ներդրման համար: Նախատեսվում է կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրում ներառել դասընթացներ, որոնք էապես կնպաստեն դասախոսների կողմից էլեկտրոնային ուսուցման դասընթացների մշակմանը և իրականացմանը:
- ԵՊՀ առանձին դասընթացների համար ստեղծվել են ծրագրային գործիքամիջոցներ էլեկտրոնային եղանակով դրանց մշակման, ներդրման և մշտադիտարկման (մոնիթորինգի) համար, ինչպես նաև ուսանող-դասախոս փոխադարձ կապի արդյունավետ կիրարկման համար: Այս միջոցներն արդեն իսկ օգտագործվել են «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» և «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ» դասընթացների ներդրման համար, որոնք և փորձարկվել են համապատասխան ֆակուլտետ-

ներում: Դասախոսների հետ անցկացվել են մարզումներ (վերապատրաստումներ), ինչպես նաև իրականացվել են փորձնական դասեր՝ մինչև ամբողջական կիրարկումը:

- Համաշխարհային բանկի դրամաշնորհի միջոցով 2014 թվականին ստեղծվել է որակի ապահովման/հավատարմագրման ՎԷԲ հենքով վիրտուալ շտեմարան և առցանց գնահատումների համակարգ, որի հիմնական նպատակը ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման հետադարձ կապի առցանց մեխանիզմների (ուսանողական հարցումներ և այլն) ապահովումը, ծրագրերի և դասընթացների որակի բարելավմանն ուղղված միջոցառումների և դրանց արդյունքների վերաբերյալ իրազեկումն է: Համակարգն այժմ գտնվում է փորձնական օգտագործման փուլում՝ փոքր թվով ուսանողական խմբերի կողմից, որից հետո ամբողջությամբ կներդրվի Համալսարանում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Վիրտուալ լաբորատորիաների կիրառումը դեռևս լայնորեն ընդգրկված չէ ուսումնական գործընթացում:
- Չնայած դասախոսների որակավորման բարձրացման ծրագրում ներառված են որոշ դասընթացներ, որոնք նպաստում են դասախոսների համակարգչային հմտությունների զարգացմանը, այնուամենայնիվ դրանք բավարար չեն դասավանդման գործընթացում տեղեկատվական համակարգերի գործնական կիրառման և դասավանդման էլեկտրոնային նյութերի ստեղծման համար: Ինչպես նաև, ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերը դեռևս ապահովված չեն էլեկտրոնային ուսուցման անհրաժեշտ նյութերով:
- Անհրաժեշտություն կա ՎԷԲ-ուսուցման որևէ տարածված ունիվերսալ էլեկտրոնային պլատֆորմի միջոցով առաջատար համալսարանների առցանց դասընթացները և ուսումնական նյութերը հասանելի դարձնել ԵՊՀ ուսանողներին:

II. Բարձրակարգ հետազոտություններ և նորարարություն

Առավելագույնի հասցնել Համալսարանի գիտական ներուժի օգտագործումը տնտեսության զարգացման և հասարակության բարեկեցության բարձրացման գործում՝ գերակա գիտական ուղղություններում ստեղծելով գերազանցության կենտրոններ, խրախուսել դասախոսական կազմի ակտիվ ներգրավումը հետազոտական աշխատանքներում:

Այս նպատակի իրագործման համար սահմանված չորս խնդիրներից յուրաքանչյուրի ուղղությամբ 2010-2014 թթ. կատարվել են համապատասխան աշխատանքներ, որոնք ներկայացվում են ստորև:

Խնդիր II. ա) Ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Ազգային գիտական արտադրանքի արտասահմանյան փորձաքննության ապահովման և արտասահմանում հասանելիությանը նպաստելու նպատակով ներկայումս ԵՊՀ գիտական տեղեկագրերից երկուսը՝ «Ֆիզիկա և մաթեմատիկա», «Քիմիա և կենսաբանություն» հրատարակվում են անգլերեն: Հանդեսներում և ամսագրերում տեղ գտած հոդվածների մի մասն ուղարկվում է արտասահման՝ փորձաքննության: Բացի այդ, այժմ արդեն ԵՊՀ բոլոր հանդեսներն ու ամսագրերը հասանելի են էլեկտրոնային գրադարանում: ԵՊՀ-ն պարբերաբար իրականացրել է հետազոտական ակտիվության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումների և դրանց վրա կատարված հղումների միջազգային ցուցանիշներով:
- ԵՊՀ նոր մշակված և արդեն կիրառվող մրցութային կարգի համաձայն՝ դասախոսը պետք է զբաղվի գիտական հետազոտությամբ:

Սա անդրադառնում է նրա աշխատավարձի վրա, երբ հաշվի են առնվում ազդեցության գործոններով հանդեսներում հրապարակված հոդվածները: Բացի այդ, պարտադիր է նաև դասախոսի մասնակցությունը դասախոսների վերապատրաստման դասընթացներին:

- Միջմասնագիտական գիտահետազոտական ծրագրերի ուղղությամբ առավել կարևոր արդյունքներ են արձանագրվել ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի աշխատանքներում: Առկա ավանդական հայագիտական հիմնական մասնագիտություններից պատմագիտությանը հնարավոր է եղել զուգակցել աշխարհագրության և քարտեզագրության, ճարտարապետության, օտար լեզուների, արևելագիտության, ինֆորմացիոն տեխնոլոգիաների և լրագրության մասնագիտական ուղղությունները: Միջմասնագիտական գիտահետազոտական ծրագրեր են իրականացվել նաև բնագիտական ֆակուլտետներում: Մասնավորապես, շարունակել է գործել «Կառուցվածքային կենսաֆիզիկա» միջֆակուլտետային գիտահետազոտական լաբորատորիան՝ կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնի և ֆիզիկայի ֆակուլտետի մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի մասնագետների մասնակցությամբ: Կարելի է նշել նաև ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն գիտությունների ընդհանուր տիրույթում ընկած թեմատիկայով 2014 թ. Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) ֆինանսավորմամբ գործող «Ատոմակայանի ետվթարային ճառագայթման ազդեցության արդյունավետ մոնիթորինգի մշակում կենսաթաղանթի կառուցվածքի փոփոխության ուսումնասիրության միջոցով» թեման:
- Ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը խրախուսվում է տարբերակված հավելավճարի համակարգում տրվող միավորների միջոցով:
- Մագիստրոսի հետազոտական կողմնորոշումն ու ուղղվածությունը, ատենախոսության թեման հիմնականում շաղկապված են ԵՊՀ-ում ընթացող գիտական նախագծերի և գիտահետազոտական խնդիրների լուծման հետ:

- Արտաքին (մասնավորապես՝ ՀՀ ԳԱԱ ստորաբաժանումների) գիտահետազոտական և լաբորատոր ներուժը բավարար չափով ընդգրկվում է մագիստրոսական ատենախոսական աշխատանքների ղեկավարման և կատարման մեջ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Ասպիրանտների և մագիստրոսների թիվը գիտական ծրագրերում կազմում է մասնակիցների համապատասխանաբար 7,5 և 6 տոկոսը, ինչը կազմում է ասպիրանտների և մագիստրոսների ընդհանուր թվերի 10 տոկոսը և 1 տոկոսը: Ուսանողական մասնակցության առավել բարձր տոկոս ձեռք է բերվել ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում, ուր 2013/2014 ուստարում նմանօրինակ աշխատակիցների թիվը կազմել է 15-20 տոկոս:
- ԵՊՀ ֆինանսական հնարավորությունները, ցավոք, թույլ չեն տալիս կազմակերպել ուսանողների պրակտիկաները ցանկալի կառուցվածքով և ծավալներով: Գործատուների վերաբերմունքը այս հարցի նկատմամբ, որպես կանոն, մնում է ոչ բարենպաստ: Այդուհանդերձ, մանկավարժական պրակտիկան ընթանում է բնականոն հունով:

Խնդիր II. բ) Խթանել համալսարան - տնտեսություն հետազոտական համագործակցության զարգացումը, հետազոտությունների արդյունքների ապրանքայնացման նպատակով ձևավորել գիտության ինովացիոն ենթակառուցվածք:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի բակալավրիատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում գործում է «Մինոփսիս Արմենիա» ընկերության հետ համատեղ իրականացվող ծրագիրը: «Մեխանիկա» մասնագիտությամբ կա համագործակցություն «Պրոգրես-տեխ Արմենիա» ընկերության հետ: Հայագիտության

մագիստրոսական ծրագիրն իրականացվում է Համազգային կրթամշակութային կենտրոնի հետ:

- Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ստեղծվել է կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոն, ինչի շնորհիվ մագիստրոսական ծրագրերը բարձրակարգ հետազոտական հենք են ունենալու:

Խնդիր II. գ) Խթանել Համալսարանի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել Համալսարանի ինտեգրումը Եվրոպական հետազոտական տարածքին:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Համալսարանում պարբերաբար կազմակերպվել են միջազգային գիտաժողովներ արտասահմանյան բարձրակարգ գիտնականների մասնակցությամբ: Բացի այդ, համալսարանի աշխատակիցները մասնակցում են նաև արտասահմանում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին:
- Համաձայն տարբերակված հավելվածարի կանոնակարգի՝ առավել բարձր միավորներ տրվում են արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում հրապարակված հոդվածների համար:
- Հաշվետու ժամանակահատվածում անգլերեն է հրապարակվել նաև ԵՊՀ «Գիտական տեղեկագրի» երկրորդ՝ «Քիմիա և կենսաբանություն» շարքը: «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում մեծացել է ռուսերեն և անգլերեն հոդվածների թիվը: Բոլոր հոդվածների էլեկտրոնային տարբերակը ներկայումս հասանելի է համալսարանի կայքում, e-library համակարգում:
- Շարունակական աշխատանքներ են տարվում արտասահմանյան գործընկերների հետ համատեղ գիտահետազոտական և փորձագիտական աշխատանքների, ինչպես նաև միջազգային դրամաշնորհային ծրագրերի իրագործման ուղղությամբ:

- Որոշ ուղղություններով հնարավոր է եղել հասնել միջհամալսարանական գիտական խմբերի ձևավորմանը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա է հետևյալ բացթողումը.

- Ֆինանսական սուղ միջոցների պատճառով դասախոսների գիտական ստաժավորումը սահմանափակվում է միայն արտասահմանից հրավերներով:

Խնդիր II. դ) Վերակառուցել համալսարանի ասպիրանտուրան որպես բարձրագույն կրթության 3-րդ աստիճան՝ որակավորումների համաեվրոպական հենքի պահանջներին համապատասխան:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- ԵՊՀ ասպիրանտական կրթությունը, որը վերաձևակերպվել է կրթության 3-րդ աստիճանի, իրականացվում է կրեդիտային համակարգով՝ ըստ Բոլոնիայի համաձայնագրի:
- Մշակվել և իրականացվում է ասպիրանտուրայի կառուցավորված գիտակրթական ծրագիրը իր կրթական և հետազոտական կառուցամասերով, իսկ դրանց աշխատաձավալները արտահայտվում են ECTS կրեդիտներով:
- Կրթական կառուցամասում իրականացվում են ապագա հետազոտողներին անհրաժեշտ մասնագիտական, փոխանցելի և մանկավարժական գիտելիքների, հմտությունների և ձիրքերի ուսուցմանը (զարգացմանը) միտված դասընթացներ և ծրագրեր:
- Կրթական ծրագրում պարտադիր է ասպիրանտի մասնակցությունը տարբեր կոլոքվիումներին, սեմինարներին, պրակտիկաներին և գիտաժողովներին:
- Մշակվել և ԵՊՀ գիտխորհրդում հաստատվել են ասպիրանտի ղեկավարման, ակադեմիական առաջընթացի, ուսումնական գործըն-

թացի կազմակերպման, գնահատման և ատեստավորման ընթացակարգերն ու կանոնակարգերը:

- Խրախուսվում է ասպիրանտների ակադեմիական շարժունությունը: Գիտաժողովների, պրակտիկաների, սեմինարների մասնակցության ինչպես նաև մասնագիտական քննարկումների, հետազոտական աշխատանքների կրեդիտները կարելի է ստանալ և փոխանցել այլ համալսարաններից: Այդ գործում մեզ աջակցում են գործընկեր համալսարանները և միջազգային դրամաշնորհային ֆոնդերը:

III. Հանրային ներգրավում և ծառայություններ

Աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով Համալսարանի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:

Այս նպատակի իրագործման համար սահմանված երկու խնդիրներից յուրաքանչյուրի ուղղությամբ 2010-2014 թթ. կատարվել են համապատասխան աշխատանքներ, որոնք ներկայացվում են ստորև:

Խնդիր III. ա) Ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում Համալսարանի առավելագույնս ներգրավումը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Զարգացել, բազմազանեցվել և նոր որակական հարթություն է տեղափոխվել Համալսարան-հասարակություն համագործակցությունը: Համալսարանը բուհ-հասարակություն կապերի զարգացումն իրականացրել է տեղեկատվական հոսքերի ապահովման ու հետադարձ կապի կայուն մեխանիզմների հաստատման միջոցով: Աշխատանքներ են տարվել ԵՊՀ վարկանիշի և հեղինակության բարձրացման ուղղություններով: Ստեղծվել են ԵՊՀ մասին ֆիլմեր, տեսանյութեր, բուկլետներ, ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ և այլ տեղեկատվական նյութեր:
- Հայաստանում գործող գրեթե բոլոր լրատվամիջոցների հետ տարվել է հետևողական աշխատանք, պարբերաբար նախապես տրամադրվել են Համալսարանում անցկացվող միջոցառումների մասին մամուլի հաղորդագրություններ: Ամենօրյա ռեժիմով իրականացվել է ՋԼՄ-ներում ԵՊՀ մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ, համապատասխան նյութերը ներկայացվել են ռեկտորատին և ենթարկվել վերլուծության: ՋԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ԵՊՀ-ին հասցեագրված հարցումներին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

- Հիմնովին նորացվել է ԵՊՀ պաշտոնական կայքը՝ www.y-su.am հասցեով, որը վերափոխվել է պորտալի: Ստեղծվել են ավելի քան 55 կայքեր: Առավելապես հեղինակություն վայելող սոցիալական ցանցերում (Facebook, Twitter, Google +), ինչպես նաև YouTube-ում ստեղծվել են ԵՊՀ պաշտոնական էջերը: Աշխատանքներ են իրականացվել ԵՊՀ ինտերնետային ռեսուրսների զարգացման, բովանդակության հազեցման և առավել մատչելի դարձնելու ուղղությամբ, ապահովվել են տեղեկատվության օպերատիվ թարմացումները: Հետադարձ կապի ապահովման մեխանիզմները կրել են առաջնային բնույթ: «Հարց/պատասխան» կայքի միջոցով տարեկան պատասխանվել է շուրջ 1000 հարցի: Մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ստացված նամակները: Արդյունքում էապես մեծացել է կայքի և սոցիալական ցանցերում էջերի այցելուների քանակը (կայքի այցելուների թիվն օրական միջինը կազմում է 5000, իսկ Facebook սոցիալական ցանցում գործող ԵՊՀ էջը ունի շուրջ 20000 հետևորդ): 2013 թ. դեկտեմբերին համահայկական «ArmNet» վեբ-մրցույթում ԵՊՀ կայքը հաղթեց «Լավագույն բովանդակություն» անվանակարգում: «Վեբոմետրիքս» (Webometrics) միջազգային վարկանշային համակարգի կայքերի չափանիշներին վերաբերող արդյունքներով ԵՊՀ կայքը վերջին 5 տարիների ընթացքում արձանագրել է էական աճ և գլխավորում է ՀՀ և տարածաշրջանի բուհերի ցանկը:
- Բազմազանեցվել են ԵՊՀ-ում առկա տեղեկատվության տարածման ձևերը: Ավանդական ձևերին (տպագիր նյութեր) ավելացել են նաև էլեկտրոնային գործիքները (ինտերնետային պորտալ, ներհամալսարանական էլ. փոստի համակարգ, սոցիալական ցանցեր, մասնաշենքերում տեղակայված հեռուստակրաններ, աշխատակիցների հեռախոսներին բջջային հաղորդագրություններ), որոնք ընդլայնել են տեղեկատվության տարածման շրջանակը՝ շեշտը դնելով «ներքին սպառողից» դեպի «արտաքին սպառողը»: ՏՏ գործիքների կիրառումը նպաստել է նաև համալսարանական գործընթացների թափանցիկությանն ու հասանելիությանը, հետադարձ կապի առցանց կայուն մեխանիզմների ձևավորմանը:

- Կանոնակարգվել է հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման գործընթացը: Իրականացվել է հանրային կապերի ոլորտում ԵՊՀ գործողությունների մշտադիտարկում և ԵՊՀ գիտական խորհրդին է ներկայացվել «ԵՊՀ հանրային կապերի արդի վիճակը» զեկույցը: Գիտական խորհուրդը հաստատել է նաև «ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգը»:
- Վեցամսյա պարբերականությամբ անցկացվել են ԵՊՀ արտաքին իմիջի վերաբերյալ Երևանի բնակչության պատկերացումների բացահայտմանն ուղղված հետազոտություններ (հեռախոսային հարցման մեթոդ):
- Համակարգվել և նպատակաուղղվել են Համալսարանի գովազդային, լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները: Համալսարանի տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվել են բազմաթիվ մարքեթինգային ծրագրեր (աշխատանք դիմորդների հետ, լրացուցիչ կրթական ծառայություններ, հանրային կապեր և այլն):
- ԵՊՀ գործունեությունը չի սահմանափակվել միայն բարձրագույն կրթության ծառայությունների մատուցմամբ: Մայր բուհի շահակիցներն են նաև հասարակության լայն շերտերի ներկայացուցիչները: Համալսարանն իր գործունեության ընթացքում առաջնորդվել է ազգային և տարածաշրջանային իր դերակատարության խոր գիտակցումով: Հասարակությանն արժեքների փոխանցման համատեքստում հանդիպումներ, հանրային դասախոսություններ և ռազմահայրենասիրական դաստիարակության ծրագրեր են անցկացվել մարզային բուհերում, զորամասերում, սահմանամերձ համայնքներում և Արցախում: Կազմակերպվել են լրացուցիչ կրթության դասընթացներ, իրականացվել են կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրեր, մատուցվել են խորհրդատվական և փորձագիտական ծառայություններ, իրականացվել են «Սփյուռք» ամառային դպրոցներ և այլ համահայկական ծրագրեր: Համալսարանը ներգրավված է եղել տարածաշրջանային և համազգային ծրագրերում, իրականացվել են բարեգործական ծրագրեր:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Հանրային կապերի ոլորտում ԵՊՀ գործողությունների համապարփակ մոնիթորինգը և համապատասխան զեկույցների ներկայացումը պարբերական բնույթ չի կրել, իրականացվել է տարերայնորեն:
- ԵՊՀ վարկանիշի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրումը եղել է սահմանափակ:
- Միասնական մասնագիտացված մարքեթինգային ծառայություն չի ստեղծվել (աշխատանքները համակարգված կերպով բաշխվել են մի շարք ստորաբաժանումների միջև):

Խնդիր III. բ) Զարգացնել հարատև ուսումնառության համակարգը Համալսարանում՝ սոցիալական պատվերին համապատասխան:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Հարատև կրթության համակարգը բարձրագույն կրթության բարեփոխումների համատեքստում օրենսդրորեն ամրագրելու և նրա զարգացումը խթանելու նպատակով ԵՊՀ-ն ՀՀ ԿԳՆ է ներկայացրել մի շարք առաջարկություններ: Արդյունքում իրականացվել են օրենսդրական որոշակի փոփոխություններ և լրացումներ:
- Մշակվել է ԵՊՀ-ում իրականացվելիք հարատև կրթության նոր հայեցակարգի նախագիծ՝ ուղղված անձի կրթական պահանջմունքների բավարարմանը: Նախագծում լրացուցիչ ուսումնառությունը սահմանվել է որպես համալսարանական կրթության համակարգի կարևոր բաղադրիչ՝ ապահովելու անձի կրթական հնարավորությունների ու ձևերի բազմազանությունը:
- Ուսումնասիրվել է հարատև կրթության պահանջարկը թիրախային 2 խմբերի համար՝ ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ՀՀ հանրային ծառայողների: Առաջին խմբի համար մշակվել է

որակավորման բարձրացման նոր ծրագիր՝ դասախոսին հնարավորություն տալով պարտադիր ու կամընտրական մոդուլների հարաբերակցության ընտրությամբ և անհատական ուսուցմամբ կատարելագործելու իր համար նախընտրելի կոմպլեքսայինները: Երկրորդ դեպքում ստեղծվել են գործընկերային կապեր ՀՀ քաղծառայության խորհրդի, պետական կառավարման մարմինների, մասնավոր ձեռնարկությունների և ՀԿ-ների հետ՝ համակարգին առաջարկելով մի շարք նոր ծրագրեր: 2010-ից ՏԵՄՂՈՒՍ-ի ECESIS նախագծի շրջանակներում ԵՊՀ-ում բացվել և գործում է հանրային ծառայողների վերապատրաստման կենտրոնը: ՀՀ քաղծառայության խորհրդի որոշմամբ ԵՊՀ-ին է վերապահվել մի շարք մասնագիտություններով հանրային ծառայողների վերապատրաստման կրթական ծրագրերի իրականացումը: Համալսարանում են վերապատրաստվում ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի, ՀՀ պաշտպանության նախարարության և պետական կառավարման այլ մարմինների աշխատակազմերի աշխատողները (2011-2014 թթ.՝ շուրջ 1900 մարդ):

- Լրացուցիչ կրթության ծրագրերը մատչելի են դարձել բոլոր համալսարանականների՝ դասախոսների, շրջանավարտների և ուսանողների համար: Նրանց իրավունք է տրվում մասնակցելու ԵՊՀ-ում իրականացվող լրացուցիչ կրթության բոլոր ծրագրերին: Համալսարանականներին մատուցվում է նաև խորհրդատվական ծառայություն: Իրենց իրավասության շրջանակներում լրացուցիչ կրթության ծրագրեր են իրականացնում համալսարանի տարբեր ստորաբաժանումներ և կենտրոններ՝ սոցիոլոգիայի ֆակուլտետը, շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, հայ-հնդկական գերազանցության կենտրոնը: 2011-2014 թթ. ԵՊՀ-ում լրացուցիչ կրթության ծրագրերով ուսումնառել է 7 000-ից ավելի ունկնդիր:
- Կրթության որակի ապահովման գործընթացներն աստիճանաբար տարածվում են նաև հարատև ուսումնառության ծրագրերի վրա: Վերջիններս մշակվում, հաստատվում և պարբերաբար վերանայվում են: Դասախոսների կատարելագործման ծրագիրը իրականացվում է կրեդիտային համակարգով, ընդ որում՝ օգտագործվում

է կրեդիտների և՛ կուտակման, և՛ փոխանցման սկզբունքը: Գործում է պարբերաբար իրականացվող դասընթաց՝ «Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ» թեմայով:

- Լրացուցիչ կրթության մատչելիությունն ապահովելու նպատակով հարստացվել են ուսուցման ձևերը: Ավանդականին զուգընթաց ներդրվում են ուսուցման արդիական ձևեր: Հիմնական ծրագիրը՝ դասախոսների որակավորման բարձրացումը, իրականացվում է անհատական պլանով: 2011 թ. նոյեմբերից գործում է Մոսկվայի Բաումանի անվ. համալսարանի հեռավար ուսուցման կետը: Ծրագրերը ներառում են և՛ պարտադիր, և՛ կամընտրական բաղադրիչներ: Պահպանվել է ստաժավորման ինստիտուտը:
- Հարատև կրթության կարիքները դիտարկելով տարածաշրջանային զարգացման համատեքստում՝ կազմակերպվել է ԵՊՀ դասախոսների շարունակական վերապատրաստում «Անգլերենը ակադեմիական միջավայրում» ծրագրով՝ երաշխավորելով նաև միջազգային հավաստագրում: Ծրագրի ավարտին՝ 2016 թ., ակնկալվում է ապահովել անգլերենով դասավանդողների բավարար թվակազմ (2011-2014 թթ. անգլերենի դասընթացի 260 ունկնդիր արդեն ստացել է ITEP միջազգային հավաստագրում՝ B1, B2, C1, C2):

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Հարատև կրթության հայեցակարգի նախագիծը չի ներկայացվել քննարկման և հաստատման՝ կապված սպասվող օրենսդրական փոփոխությունների և ոլորտի բազմիմաստ տերմինների ճշգրտման հետ (ԵՊՀ նախորդ հայեցակարգը հաստատվել էր 2007-ին): Օրենսդրական փոփոխությունները արվել են 2014 թ. հունիսի 21-ին:
- Չի իրականացվել հարատև կրթության ծրագրերի բազմազանեցումն ըստ բարձրագույն մասնագիտական կրթության մակարդակների:

IV. Որակյալ կադրային ներուժ

Ներգրավել բարձրորակ դասախոսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:

Այս նպատակի իրագործման համար սահմանված երկու խնդիրներից յուրաքանչյուրի ուղղությամբ 2010-2014 թթ. կատարվել են համապատասխան աշխատանքներ, որոնք ներկայացվում են ստորև:

Խնդիր IV. ա) Համալրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Մշակվել, գիտխորհրդի կողմից հաստատվել և 2011 թ-ից գործում է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման նոր ծրագիրը: Վերջինս բազմազանեցված է թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակային առումով՝ կրթական բաղադրիչի մոդուլային կառուցվածք, հետազոտական աշխատանք, արդյունքների հաշվարկման կրեդիտային համակարգ, ուսուցման հնգամյա ժամկետ և ավարտական հստակ չափանիշներ: Նման գործիքներ ունեցող ծրագիրը դասախոսին հնարավորություն է տալիս բարձրացնելու որակավորումը ուսուցման անհատական պլանով՝ կրթական և հետազոտական մոդուլների հարաբերակցության ընտրությամբ ապահովելով նախընտրելի կոմպետենցիաների և անձնային որակների շարունակական զարգացումը: Ծրագրի կրթական մոդուլները ներառում են դասախոսի պատրաստության բոլոր կողմերը՝ ակադեմիական անգլերեն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, մանկավարժական-հոգեբա-

նական և մասնագիտական պատրաստություն՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան: Հաշվառվում և կրեդիտավորվում է նաև որակավորման բարձրացման հիմնական ծրագրից դուրս դասախոսի դրսևորած ակտիվությունը՝ խրախուսելու նրա ինքնակրթությունը և ակադեմիական շարժունությունը (ծրագրի «Որակավորման բարձրացման այլ ձևեր» բաղադրիչ): Դրան է ուղղված նաև դասախոսների միջազգային հավաստագրումը անգլերենից:

- Լրամշակվել, գիտխորհրդի կողմից հաստատվել և 2012 թ-ից գործում է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը, որով սահմանվում են համակազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման կարգն ու պայմանները, հստակեցվում չափանիշները, տրվում են նաև համակազմի տարակարգերը և պաշտոնների նկարագրությունը:
- Կրթական գործընթացի կադրային ապահովվածությունը իբրև պահանջ ամրագրված է «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգում», որը գործում է 2014 թ-ից:
- Մշակվել և իրականացվել են վերապատրաստողների վերապատրաստման նոր ծրագրեր ԵՊՀ-ում («Կրթական ծրագրերի որակի ապահովումը և ուսանողների ու դասախոսական կազմի գնահատումը») և ՈԱԱԿ-ում («Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում»):

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա է հետևյալ բացթողումը.

- Լիարժեքորեն չի իրականացվել դասախոսական կազմի բազմաչափ գնահատումը՝ ըստ մասնագիտական պատրաստության, մանկավարժական վարպետության և տարիքային կազմի:

Խնդիր IV. բ) Բարձրացնել ԵՊՀ աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- ԵՊՀ-ում դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմներից են հավելավճարի սահմանման ու տրամադրման չափանիշները և ընթացակարգերը, որոնք գործում են 2007/2008 ուստարվանից և պարբերաբար լրամշակվում ու բարելավվում են: 2013 թ. լրամշակված կարգով սահմանված չափանիշները ներառում են ԵՊՀ դասախոսների գործունեության հնարավորինս բոլոր բաղադրիչները՝ դրանց արդյունավետության հաշվառումով: Հաշվետու ժամանակաշրջանում (2011-2014 թթ.) էապես մեծացել է տարբերակված սկզբունքով վճարվող աշխատավարձի մասնաբաժինը ընդհանուր աշխատավարձում:
- Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ դասախոսական կազմի միջին աշխատավարձը բարձրացել է 40 %-ով՝ կազմելով ԵՊՀ բյուջեի 70 %-ը և 2014 թ. հուլիսի 1-ի դրությամբ հասնելով ՀՀ միջին աշխատավարձի 150 %-ին: 2014 թ. հուլիսի 1-ից ՀՀ պետճառայողների աշխատավարձի կտրուկ աճի արդյունքում համեմատության այդ գործակիցը նվազել է. այժմ ԵՊՀ դասախոսական կազմի միջին աշխատավարձը կազմում է ՀՀ միջին աշխատավարձի 112 %-ը:
- Իրականացվել են մի շարք սոցիալական ծրագրեր և միջոցառումներ՝ դրամական օգնություն, աշխատակցի երեխայի ուսման վարձի զեղչ, տարեվերջյան պարգևատրում, տոնական և մշակութային միջոցառումներ՝ տոմսերի հատկացումով: Սոցիալական ծրագրերի շրջանակներում ԵՊՀ աշխատակիցները մատչելի գներով հանգստացել են համալսարանական բազաներում (Ծաղկաձոր, Հանքավան, Բյուրական): Բարեփոխումներ են նախաձեռնվել մասնաշենքերում գործող համալսարանական սննդի օբյեկտներում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Դեռևս կյանքի չեն կոչվել ծրագրված մի քանի նախագծեր՝ համալսարանի աշխատակիցների սոցիալական մոնիթորինգի համակարգի ներդրում, սոցիալական բավարարվածության մակարդակի գնահատում, սոցիալական օգնության հիմնադրամի ստեղծում:
- Ֆինանսական խնդիրների պատճառով սոցիալական ծրագրերի տեսականին չի ընդլայնվել, 2014 թ. չեն գործում Բյուրականի և Հանքավանի բազաները: Չնայած նախաձեռնված բարեփոխումներին՝ ԵՊՀ մասնաշենքերում գործող սննդի օբյեկտները մի շարք ցուցանիշներով դեռևս չեն բավարարում ԵՊՀ աշխատակիցների պահանջները:

V. Որակյալ ենթակառուցվածքներ

Ստեղծել տեխնոլոգիապես հազեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար:

Այս նպատակի իրագործման համար սահմանված երկու խնդիրներից յուրաքանչյուրի ուղղությամբ 2010-2014 թթ. կատարվել են համապատասխան աշխատանքներ, որոնք ներկայացվում են ստորև:

Խնդիր V. ա) Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել Համալսարանի ուսումնական և գիտական լաբորատոր բազան՝ կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Իրականացվել է ուսումնագիտական լաբորատոր բազայի և լսարանային ֆոնդի փուլային արդիականացում: Ստեղծվել են 26 նոր լսարաններ, կաբինետներ, լաբորատորիաներ և կենտրոններ: Կապիտալ վերանորոգվել և կահավորվել են կենսաբանության, ռոմանագերմանական բանասիրության, ժուռնալիստիկայի, արևելագիտության, տնտեսագիտության, պատմության, սոցիոլոգիայի, ռուս բանասիրության ֆակուլտետների տարածքները, ինչպես նաև այլ ֆակուլտետների տարածքներում գտնվող ավելի քան 50 սենյակ:

Նոր լսարաններ են բացվել հայագիտական հետազոտությունների ինստիտուտում, ինչպես նաև աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում:

- Ուսումնական լաբորատորիաներում կատարվել են վերանորոգման և կահավորման աշխատանքներ: Տարեկան ավելի քան 160 միլիոն դրամի լաբորատոր տեխնիկա է ձեռք բերվել: ԵՊՀ ֆիզիկա-

յի, դեղագիտության և քիմիայի, մաթեմատիկայի և մեխանիկայի, կենսաբանության, աշխարհագրության և երկրաբանության, փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետներում ստեղծվել են տարբեր մասնագիտությունների գծով վիրտուալ լաբորատորիաներ:

- Գրադարանի և հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համար ձեռք է բերվել գրականության թվայնացման սարքեր: Թվայնացվել է շուրջ 10000 անուն գրականություն:
- Սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռուստուցման լաբորատորիայում առանձին մասնագիտություններով (սոցիալական աշխատանք, մարդկային ռեսուրսների կառավարում և այլն) իրականացվում են առցանց (On-line) դասընթացներ: ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի միջոցով առցանց իրականացվում է «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ» դասընթացը հումանիտար ֆակուլտետների համար:
- Համալսարանի տարածքում գործում են շուրջ 40 համակարգչային լսարան, որոնք ունեն ինտերնետ կապ, թույլ են տալիս կիրառել առցանց եղանակով ուսուցման մեթոդներ: Համալսարանում ստեղծվել է 24 հոսքային լսարան՝ ինտերնետ կապով, ինտերակտիվ գրատախտակով, ցուցադրման թվային սարքով և այլ անհրաժեշտ պարագաներով:
- Ընդլայնվել է համագործակցությունը տարբեր կազմակերպությունների հետ՝ ուսումնագիտական լաբորատոր բազաների վերազինման ուղղությամբ: Աջակցություն են ցուցաբերել Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, «Լույս» հիմնադրամը, ԵՄ Տեմպուս ծրագրերը, Համաշխարհային բանկի ծրագրերը, «Սամսունգ Էլեկտրոնիքս», «Մինոփսիս Արմենիա», «Ֆուլքսվագեն» ընկերությունները, Դեղարտադրողների և ներկրողների միությունը, Հանրային հեռուստառադիոընկերությունը և այլն:
- Ուսումնական և լաբորատոր տարածքների առավել արդյունավետ օգտագործման, ինչպես նաև ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման կատարելագործման նպատակով

կատարվել են հոսքերի և խմբերի միավորումներ առկա և հեռակա ուսուցման համակարգերում (հատկապես կամընտրական այն դասընթացների համար, որտեղ սակավաթիվ ուսանողներ են ցուցակագրվել):

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Ստեղծված չեն լեզվի ուսուցման մասնագիտացված լսարան-լաբորատորիաները, որոնք նախատեսված էին օտար լեզուների ուսուցման որակը արդի պահանջներին համապատասխանեցնելու համար:
- Դեռևս առկա են լսարաններ, ուսումնական լաբորատորիաներ, որոնց վիճակը (կահավորումը, սարքավորումներով հագեցվածությունը) չի համապատասխանում արդի պահանջներին:

Խնդիր V. բ) Ստեղծել Համալսարանի միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել վերջինիս մատչելիությունը Համալսարանի ուսանողների և աշխատակիցների համար:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Նորացվել և օպտիմալացվել է համալսարանի ներքին համակարգչային ցանցը: Համալսարանի գրեթե բոլոր համակարգիչները միացվել են 100 Մբիթ/վ արագությամբ ԵՊՀ ներքին և 50 Մբիթ/վ արագությամբ ինտերնետ ցանցին: ԵՊՀ մասնաշենքերի միջև ստեղծվել է 1 Գբիթ/վ արագությամբ գործող օպտիկամալուխային ցանց, որի միջոցով միմյանց հետ միացված են ԵՊՀ բոլոր ուսումնական մասնաշենքերը, ներառյալ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը: ԵՊՀ բոլոր մասնաշենքերն ապահովված են անլար (WiFi) ազատ ինտերնետ կապով:

- Տեղեկատվական ենթակառուցվածքների արտադրողականության զարգացման և հզորությունների մեծացման նպատակով հիմնադրոգվել է ԵՊՀ կենտրոնական սերվերների սենյակը, ձեռք են բերվել նոր ժամանակակից սերվերներ և այլ սարքավորումներ: Աշխատանքներ են իրականացվել տեղեկատվական համակարգերի հուսալիության և պաշտպանվածության բարձրացման ուղղությամբ: Հիմնովին վերակառուցվել և արդիականացվել է ԵՊՀ հեռախոսակապի համակարգը:
- Խարունակաբար թարմացվում և նորացվում են ԵՊՀ ստացիոնար համակարգիչները. հին և թույլ պարամետրերով համակարգիչները փոխարինվել են նոր և հզոր համակարգիչներով (շուրջ 500 համակարգիչ): Էապես մեծացել է նաև շարժական համակարգիչների թիվը (ավելի քան 300 սարք):
- Համալսարանի կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ձևավորման շրջանակներում մշակվել և պարբերաբար արդիականացվել է ուսումնական գործընթացի կազմակերպման և կառավարման «SuperVision» համակարգը: Համակարգի միջոցով կառավարվում է ուսանողների տվյալների բազան, գրանցվում է ուսանողների առաջադիմությունը, իրականացվում են փոխատեղման գործընթացի հետ կապված աշխատանքները: Համակարգը ավտոմատ կերպով պատրաստում է շրջանավարտի դիպլոմի համաեվրոպական նմուշի հավելվածը: Համակարգի շնորհիվ բարձրացել է ուսումնական պլանների, ամբիոնային բեռնվածությունների և դասատախտակների կազմման, զեղչերի տրամադրման, ուսանողական հարցումների իրականացման աշխատանքների արդյունավետությունը: «SuperVision» համակարգի տվյալների բազան ինտեգրվել է սովորողների էլեկտրոնային փոստի տվյալների հենքի հետ: Ստեղծվել է նաև դասընթացների գնահատման առցանց համակարգ:
- Ստեղծվել է ԵՊՀ մի շարք վարչական գործընթացները ավտոմատացնող համակարգ, գույքի հաշվառման էլեկտրոնային համակարգ: ԵՊՀ հաշվապահությունում ներդրվել է «Հաշվապահական

հայկական ծրագիրը»: ԵՊՀ ինտերնետային ռեսուրսների (շուրջ 55 կայք) հոստինգը իրականացվում է ԵՊՀ համապատասխան ենթակառուցվածքների միջոցով:

- Պարբերաբար կազմակերպվել են տեղեկատվական համակարգեր օգտագործողների վերապատրաստումներ:
- ԵՊՀ բոլոր աշխատակիցներին և ուսանողներին տրամադրվել են էլեկտրոնային փոստի հասցեներ՝ ysu.am և ysumail.am դոմեյնային տիրույթներում: Ուսանողի էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով օգտագործվում է դասընթացների գնահատման առցանց համակարգը:
- ԵՊՀ հաշվապահության կողմից կիրառվում է էլեկտրոնային ստորագրությունը պետական մարմիններին հաշվետվությունների ներկայացնելու համար:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Ստեղծված չէ անձնակազմի կառավարման տեղեկատվական համակարգ:
- Ուսանող-դասախոս երկկողմ շփումներում էլեկտրոնային (ինտերնետային) գործիքների օգտագործման մակարդակը բավարար չէ:

VI. Որակյալ ծառայություններ

Տրամադրել բարձրորակ և արդյունավետ օժանդակ ծառայություններ, որոնք միտված են ուսանողների կրթական, մասնագիտական և սոցիալական կարիքների լիարժեք բավարարմանը՝ առավելագույնի հասցնելով ուսումնառությունը հաջողությամբ ավարտելու նրանց հնարավորությունները:

Այս նպատակի իրագործման համար սահմանված երկու խնդիրներից յուրաքանչյուրի ուղղությամբ 2010-2014 թթ. կատարվել են համապատասխան աշխատանքներ, որոնք ներկայացվում են ստորև:

Խնդիր VI. ա) Բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ-ում ուսումնառությունից և օժանդակ ուսանողական ծառայություններից:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- ԵՊՀ-ում հետևողականորեն կատարելագործվել է ուսանողական հարցումների գործընթացը: Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգի համաձայն՝ յուրաքանչյուր կիսամյակ իրականացվել են համապատասխան հարցումներ, արդյունքները քննարկվել են ԵՊՀ գիտական խորհրդի և ֆակուլտետների գիտական խորհուրդների կողմից: Մշակվել և ներդրվել է ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի գնահատման առցանց համակարգ: Կանոնակարգվել և կատարելագործվել են ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների ամենամյա հարցումները:
- Ուսումնասիրվել է բարձր վարկանիշ ունեցող եվրոպական և ամերիկյան մի շարք բուհերի կարիերայի հարցերով զբաղվող կառույցների փորձը: Իրականացվել է հետազոտություն ԵՊՀ-ում ուսանողական օժանդակ ծառայությունների մատուցման խնդիրների վերաբերյալ, ստացված արդյունքներն օգտագործվել են աշխատանքների պլանավորման ընթացքում:

- Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրումն իրականացվել է գործընկեր կազմակերպությունների միջոցով: Վերջիններս պարբերաբար տրամադրել են տեղեկատվություն այն ուսանողների կամ շրջանավարտների մասին, ովքեր համալրել են կազմակերպության թափուր հաստիքները կամ անցել են պրակտիկա կամ ինթերնշիփ:
- Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի էլեկտրոնային ռեսուրսները (շրջանավարտների տվյալների շտեմարան, կայք, ձեռնարկությունների հետ փոխգործակցության պորտալ, HEN GEAR շրջանավարտների զբաղվածության պորտալ, Ֆեյսբուք սոցցանցի էջ) շրջանավարտների և գործատուների հետ հետադարձ կապի գործիք են հանդիսացել:
- Ակտիվ քայլեր են ձեռնարկվել ուսանողների գործնական հմտությունների զարգացման ուղղությամբ: Ընդլայնվել է պրակտիկայի հնարավորություն ընձեռող ձեռնարկությունների թիվը: Քայլեր են ձեռնարկվել ուսանողների լրացուցիչ պրակտիկայի (ինթերնշիփի) ներդրման ուղղությամբ, մշակվել է համապատասխան կանոնակարգ: Ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացման, աշխատաշուկայում ինտեգրման և մրցունակության բարձրացման նպատակով կազմակերպվել են տարբեր սեմինար դասընթացներ, խորհրդատվություններ, վարպետաց դասեր, հանդիպում-քննարկումներ, այցելություններ տարբեր կազմակերպություններ: Հարյուրավոր ուսանողների համար կազմակերպվել են լրացուցիչ (ուսումնական պլանով չնախատեսված) պրակտիկաներ:
- Ընդլայնվել են ինչպես ուսանողական նպաստների (ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման) այնպես էլ համալսարանի կողմից ուսման վարձավճարների զեղծերի ծավալներն ու շահառու խմբերը: ԵՊՀ գիտական խորհրդի կողմից պարբերաբար վերանայվում է ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը: ՀՀ կառարավարության, համալսարանի և տարբեր գործընկեր ձեռնարկությունների և կազմակերպությունների կող-

մից («Վիվասել», «Օրանժ», «Բիլայն», «Վարդանանց ասպետներ» միություն և այլն) սահմանված են կրթաթոշակներ՝ բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողների համար:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Ուսանողական օժանդակ ծառայությունների ամբողջական համակարգ դեռևս ձևավորված չէ:
- Ուսանողների ֆինասական օգնության ծավալները բավարար չեն:

Խնդիր VI. ք) Չարգացնել Համալսարանի տեղեկատվական ռեսուրսները ժամանակակից չափանիշներին համապատասխան, ապահովել դրանց արդյունավետ օգտագործումն ու մատչելիությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Ուսումնական գործընթացում ներգրավված տարբեր օղակների ներկայացուցիչների հետ (ամբիոնի վարիչներ, դասախոսներ, ուսանողներ) պարբերաբար քննարկվել են տեղեկատվական ռեսուրսների կարիքները, դրանց զարգացման ուղղությունները: Ուսումնական և գիտահետազոտական գործընթացների արդյունավետ իրականացման համար ստեղծվել է ԵՊՀ գրադարանի էլեկտրոնային ռեսուրսների շտեմարան: Մշակվել և մշտապես նոր էլեկտրոնային նյութերով է համալրվում գրադարանի կայքը:
- Գրադարանում իրականացվել է օգտվողների կողմից պահանջարկ ունեցող գրականության թվայնացում: Թվայնացվող գրականության առաջնահերթությունը որոշվել է ֆակուլտետներից և ամբիոններից ուղարկված ցանկերով: ԵՊՀ գրադարանի ներքին ցանցում առկա են շուրջ 2000 ուսումնական գրքերի և շուրջ 5000 գիտական հոդվածների էլեկտրոնային տարբերակները:

- Գրադարանի էլեկտրոնային ռեսուրսները հասանելի են համալսարանի ներքին ցանցին միացված բոլոր համակարգիչներից, այդ թվում նաև Իջևանի մասնաճյուղի օգտվողների համար:
- Տարեցտարի ԵՊՀ գրադարանը մեծացրել է էլեկտրոնային գրականության բաժանորդագրության ծավալները: 2011 թվականից ԵՊՀ գրադարանը ռուսալեզու ամսագրեր բաժանորդագրվում է միայն էլեկտրոնային տարբերակով՝ հասանելի համալսարանի ցանկացած համակարգչից: Համալսարանի ողջ տարածքից հասանելի են Springer, EBSCO և այլ էլեկտրոնային բազաներ (բազաների ամբողջական ցանկը ներկայացված է գրադարանի կայքում): Գրադարանում գործում է էլեկտրոնային հոդվածների պատվերների սպասարկման խումբ:
- ԵՊՀ գրադարանը անդամակցում է Եվրոպական հետազոտական գրադարանների կոնսորցիումին (LIBER), Գրադարանների ասոցիացիայի միջազգային համադաշնությանը (IFLA) և Հայաստանի էլեկտրոնային գրադարանների ասոցիացիային (ELCA):
- Գրադարանային ոլորտում տարվող քաղաքականությունը զարգացնելու, գրադարանի, ֆակուլտետների և ամբիոնների արդյունավետ փոխգործակցությունը ապահովելու նպատակով ստեղծվել է ԵՊՀ գրադարանային խորհուրդ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Գրադարանի էլեկտրոնային քարտարանի մուտքագրման աշխատանքները ավարտված չեն:
- Էլեկտրոնային ռեսուրսների ծավալը և կիրառումը բավարար չէ:
- Գրադարանի կողմից ընթերցողներին սպասարկումը ապահովող ենթակառուցվածքները կարիք ունեն արդիականացման:

**ԸՆԹԱՑԻԿ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՆՔԲԵՐՄԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**VII. Ընդունելության բազմազանեցված մուտք
և համապատասխանություն**

Ընդլայնել Համալսարանի ընդունելության պրոֆիլը և այն համապատասխանեցնել երկրի տնտեսական զարգացման կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին: Ջարգացնել ուսանողական համակազմի միջազգայնացման առկա միտումը:

Այս նպատակի իրագործման համար երեք խնդիրներից յուրաքանչ-յուրի ուղղությամբ 2010-2014 թթ. կատարվել են համապատասխան աշխատանքներ, որոնք ներկայացվում են ստորև:

Խնդիր VII. ա) Ակտիվացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ ժողովրդագրական բացասական միտումների պայմաններում դիմորդների հոսքի պահպանման համար:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Ընդլայնվել և ակտիվացվել է ԵՊՀ գովազդարշավը՝ այդ գործընթացում առավելագույնս ներգրավելով Համալսարանի բոլոր ուսումնական ստորաբաժանումները, ուսանողական կառույցները, հիմնական գործատուներին և այլ շահագրգիռ կազմակերպություններ:
- Ակտիվացվել է առաջարկվող կրթական ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգը, ապահովվել է անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը. անցած 5 տարիների ընթացքում նախապատրաստվել և հանրակրթական հաստատություններին անվճար տրամադրվել է «Դիմորդի ուղեցույց»՝ 11500 տպաքանակով, ԵՊՀ ֆակուլտետների մասին պատմող տեսասկավառակներ՝ 4500 հատ, և ԵՊՀ-ն ներկայացնող բուկլետներ՝ 2000 տպաքանակով:

- Ընդլայնվել են ավագ դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները. շուրջ 4,5 հազար աշակերտի համար կազմակերպվել են ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր ԵՊՀ՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով հանդիպելու համալսարանի և ֆակուլտետների ղեկավարության հետ, ծանոթանալու ուսումնական ծրագրերին և ուսումնառության առկա հնարավորություններին: Երևանի ավագ դպրոցների շուրջ 1000 աշակերտի համար կազմակերպվել է անվճար դասընթացներ մի շարք առարկաներից:
- Դեպի համալսարան մուտքի մատչելիությունն ապահովելու համար ձևավորվել է նախապատրաստական դասընթացների լայն ընտրանի՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի, ապահովվել են դրանց իրականացման ճկուն ժամանակացույցները: 2010-2014 թթ. նախապատրաստական դասընթացներն ավարտել է 263 ունկնդիր: Նրանցից 140-ը ընդունվել է ԵՊՀ առկա, 120-ը՝ հեռակա ուսուցման համակարգ:
- ՀՀ բոլոր մարզերի և Երևանի 29 ավագ դպրոցների և 15 վարժարանների հետ կնքվել են համագործակցության պայմանագրեր: Ակտիվացվել է այդ դպրոցների հոսքային դասարանների կապը համապատասխան ֆակուլտետների հետ: Միաժամանակ, 28 ավագ և հիմնական դպրոցների հետ մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ են տարվել երկարաժամկետ համաձայնագրերի շրջանակներում:
- Դիմորդների հավաքագրման աշխատանքները նաև մարզերում ծավալելու նպատակով ՀՀ 8 մարզերում ստեղծվել է ԵՊՀ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով հենակետեր (ներկայացուցչություններ): Դրանք ակտիվ աշխատանք են տանում ԵՊՀ կրթական ծրագրերի և մասնագիտությունների մասին անհրաժեշտ տեղեկատվություն ապահովելու ուղղությամբ: Մինչև ուսումնական տարեվերջ նմանատիպ հենակետեր կստեղծվեն նաև ՀՀ Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա է հետևյալ բացթողումը.

- ԵՊՀ կառուցվածքում հենակետային վարժարան չի ստեղծվել:

Խնդիր VII. ք) Համապատասխանեցնել Համալսարանի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները աշխատաշուկայի և դիմորդների համադրված կարիքներին:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Իրականացվել է ԵՊՀ ներքին և արտաքին միջավայրային վերլուծություն՝ մասնագիտական աշխատաշուկայի առկա պահանջ-մունքների և միտումների, պոտենցիալ դիմորդների նախասիրությունների (կոդմնորոշվածության) ու կրթական կարիքների, արտաքին բարենպաստ հնարավորությունների ու ներքին չօգտագործված կարողությունների բացահայտման ու գնահատման նպատակով:
- ԵՊՀ-ն 2010-2014 թթ. ընթացքում պարբերաբար զարգացրել է ընդունելության պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և մասնագիտությունների՝ հաշվի առնելով վերջիններիս պահանջարկը, դրանց իրականացման համար համալսարանում առկա ներուժը: Յուրաքանչյուր ուստարի վերանայվել է կրթական ծրագրերի և համապատասխան ընդունելության քննությունների ցանկը: Նշված ժամանակահատվածում ընդունելություն է կազմակերպվել բակալավրի և մագիստրոսի՝ մեկ տասնյակից ավելի նոր կրթական ծրագրերով:
- ԵՊՀ-ում 2007 թ. վերաբացվել է հեռակա ուսուցումը բակալավրի, իսկ 2009 թ.՝ մագիստրոսի կրթական ծրագրերով: 2010-2014 թթ. բակալավրիատում և մագիստրատուրայում հեռակա ուսուցմամբ սովորողների թիվը հասել է 5200-ի, ինչը կազմում է հիմնական ուսանողների թվի մոտ 30 % -ը:

Կայուն աճ է նկատվում նաև հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայում. հեռակա ուսուցմամբ սովորողների համակազմում ասպի-

րանտների թիվը 313 է, ինչը կազմում է հեռակա ուսուցմամբ սովորողների թվի մոտ 6 %-ը:

Խնդիր VII. գ) Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը Համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում՝ ներդնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- 2011/2012 ուստարվանից ԵՊՀ-ում իրականացվում է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման նոր կրթագիտական ծրագիր: Համաձայն այդ ծրագրի՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի պահանջարկված մասնագիտությունների գծով օտարերկրացի սովորողների համար օտար լեզուներով ուսուցում կազմակերպելու նպատակով իրականացվում է ակադեմիական անգլերենի ուսուցում՝ ITEP միջազգային հավաստագրումով: Մինչ օրս անգլերենից քննություն է հանձնել 652 դասախոս, նրանցից 250–ը դրսևորել է բարձր մակարդակի (B1 - C2) իմացություն և ստացել միջազգային հավաստագիր:
- Ընդունելության դոնոր երկրների աշխարհագրության ընդլայնման նպատակով ԵՊՀ կայքէջում տեղադրվել է ընդհանուր տեղեկատվություն օտարերկրյա դիմորդների ընդունելության և ուսումնառության վերաբերյալ, ներկայացվել է տեղեկատվություն համալսարանի ստորաբաժանումների, նրանց ուսումնամանկավարժական և գիտական գործունեության մասին:
- Օտարերկրյա ասպիրանտների համար թարգմանվել են (պարսկերեն և անգլերեն) ուսումնառության կարգին վերաբերող փաստաթղթերը: Համագործակցության կողմ հանդիսացող օտարերկրյա որոշ բուհերի տրամադրվել է ամբողջական տեղեկատվություն ԵՊՀ-ի և համալսարանում ուսումնառության վերաբերյալ:
- Ջավախքի, Սիրիայի սփյուռքահայ ուսանողների և ասպիրանտների կրթության առավել հասանելիության նպատակով, ինչպես

նան հիմք ընդունելով այս ուղղությամբ տարվող պետական քաղաքականությունը՝ զգալիորեն կրճատվել են նրանց ուսման վարձերի չափերը:

- ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ հայկական սփյուռքի ուսուցիչների համար կազմակերպվում են ամառային դպրոցներ («Մփյուռքի ուսուցիչների վերապատրաստում», «Հայոց լեզվի արագացված ուսուցում», «Երիտասարդ առաջնորդների դպրոց», «Մփյուռքի լրագրողների դպրոց», «Ազգային երգ ու պարի դպրոց», «Համայնքային գործի կազմակերպիչների դպրոց»):
- Օտարերկրյա ուսանողների հեռաուսուցումը խթանելու նպատակով ԵՊՀ-ն համագործակցել է ՀԲԸՄ վիրտուալ քոլեջի հետ, հեռաուսուցում է իրականացվել ԵՊՀ հայագիտության ինստիտուտի աշխատանքների շրջանակներում (Լիբանան, ՌԴ): Հեռաուսուցման դասընթացներ են իրականացվել նաև սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռակա ուսուցման լաբորատորիայի միջոցով:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Օտարերկրյա քաղաքացիների համար օտար լեզուներով կրթական ծրագրեր դեռ չեն իրականացվում՝ բացառությամբ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» մագիստրոսական ծրագրի:
- Ֆինանսական միջոցների սահմանափակ հնարավորությունների պատճառով բավարար մակարդակի չեն հասցվել համապատասխան ենթակառուցվածքները, հատկապես հանրակացարանային ֆոնդերը:
- Դեռևս անբավարար են ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների, հայկական համայնքների, ինչպես նաև կրթական գերատեսչությունների հետ տարվող աշխատանքները արտերկրում ուսանողների հավաքագրման, տեղեկատվության տարածման, ուսումնակրթական ցուցահանդեսներ և այլ կարգի գովազդներ կազմակերպելու ուղղությամբ:

VIII. Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում

Դառնալ ավելի նախաձեռնող Համալսարանի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման և դրանց բազմազանեցման հարցերում: Բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը:

Այս նպատակի իրագործման համար սահմանված յոթ խնդիրներից յուրաքանչյուրի ուղղությամբ 2010-2014 թթ. կատարվել են համապատասխան աշխատանքներ, որոնք ներկայացվում են ստորև:

Խնդիր VIII. ա) Մեծացնել Համալսարանի ֆինանսական միջոցների ներհոսքը և բազմազանեցնել դրանց աղբյուրները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Կրթության մասով պետական բյուջեից ֆինանսավորումները (առանց կրթաթոշակի ծրագրերի) կատարվել են երկու ծրագրերով՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական: Վերջին 5 տարիների ընթացքում պետական ֆինանսավորումն ավելացել է 11 %-ով, սակայն անվճար համակարգում սովորողների թիվը նվազել է 35 %-ով: Մեկ ուսանողի միջին տարեկան ֆինանսավորումն ավելացել է շուրջ 67 %-ով՝ բարձրագույն մասնագիտական կրթության և 53 %-ով՝ հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերով: Գիտական մասով պետական բյուջեից ֆինանսավորումները (առանց տարանցիկ ծրագրերի) վերջին 5 տարիների ընթացքում ավելացել են 20 %-ով՝ տարեկան գիտական ծրագրերի ֆինանսավորման չափը հասցնելով 800 միլիոն դրամի:
- Պարբերաբար իրականացվող մշտադիտարկման արդյունքում Համալսարանը շարունակաբար զարգացրել է իր մատուցած վճարովի ծառայությունների տեսականին և ծավալները՝ դրանց եկամտաբերությունը վերջին 5 տարիներին ավելացնելով 30 %-ով: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վճար-

րովի ուսուցման ծառայությունները կազմում են ընդհանուր եկամուտների 65 %-ը:

- Դրամաշնորհային ծրագրերի ծավալները շուրջ 90 %-ով ավելացել են վերջին 5 տարիների ընթացքում և գերազանցում են տարեկան 700 միլիոն դրամ շրջանառությունը: Համալսարանը ակտիվորեն մասնակցել է թե՛ ԱՂՀ, թե՛ ԵՄ տարածաշրջանի և թե՛ ԱՄՆ-ի հետ իրականացվող միջազգային դրամաշնորհներին:
- Հիմնական կրթական ծրագրերի եկամտաբերության և տնտեսական արդյունավետության գնահատման չափանիշների ներմուծման նպատակով հաշվարկվել են «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից մատուցվող բարձրագույն և հետբուհական կրթական ծառայությունների գծով, ըստ մասնագիտությունների մեկ ուսանողին բաժին ընկնող ընդհանուր ծախսերը՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 27/06/2012 թիվ 646-Ա/Ք և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 28/06/2012 թիվ 526-Ա համատեղ հրամանով հաստատված ուղեցույցի պահանջները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Համալսարանի ուսումնական ստորաբաժանումները սեփական արտաբյուջետային միջոցները հիմնականում ձևավորել են հեռակա ուսուցման կազմակերպման շրջանակներում և չեն կարողացել նախաձեռնել ինքնուրույն ֆինանսական միջոցների ձևավորման այլ գործընթացներ:
- «Հյուրերի տան» և ուսումնաարտադրական բազաների գործունեությունը շահութաբեր չէ, իսկ ստացված արտաբյուջետային եկամուտները վերջին 5 տարիներին աճել են միայն 8 %-ով:

Խնդիր VIII. բ) Մեծացնել շրջանավարտների, նվիրատու կազմակերպությունների և անհատների ներդրումների ծավալը Համալսարանի զարգացման ծրագրերում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Եվրոպական միության ֆինանսավորմամբ TEMPUS «HEN GEAR» ծրագրի շրջանակներում սկիզբ է դրվել շրջանավարտների գրանցման պորտալի ստեղծման գործընթացին:
- «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ-ն նախաձեռնել և իրականացրել է «Աջակցություն երիտասարդ համալսարանականների բնակարանաշինությանը» ծրագրի շրջանակներում բազմաբնակարան շենքի կառուցումը, որի բնակարանները արտոնյալ պայմաններով օտարվել են ԵՊՀ աշխատակիցներին: Այս ծրագիրը լուրջ սոցիալական աջակցություն էր երիտասարդ համալսարանականներին:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Շրջանավարտների կապը Համալսարանի հետ կազմակերպված բնույթ չի կրում և չի նպաստել Համալսարանի արտաքին գործակցային կապերի ձևավորմանը և արտաքին ներդրումների և նվիրատվությունների խթանմանը:
- Համալսարանում չի ստեղծվել համապատասխան մասնագիտացված կառույց, որը կօժանդակեր Համալսարանի առանձին ուսումնական ստորաբաժանումներին դրամաշնորհային հայտերի մշակման և նվիրատու կազմակերպությունների կամ անհատների հավաքագրման հարցերում:

Խնդիր VIII. գ) Ներդաշնակեցնել ֆինանսական պլանավորումը Համալսարանի ռազմավարական նպատակներին և խնդիրներին:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Համալսարանը շարունակաբար իրականացրել է իր տարեկան բյուջեի պլանավորումը նախահաշվի կազմման տեսքով: ԵՊՀ-ն իր եկամուտների և ծախսերի նախահաշիվը կազմելիս օգտվել է «հանդիպակաց բյուջետավորում» մեթոդից: Նախահաշիվ կազմելը նպաստել է պլանավորմանը և վերահսկողությանը, ինչպես նաև կառավարչական որոշումների արդյունավետության բարձրացմանը:
- ԵՊՀ նախահաշվի ծախսերը վերջին 5 տարիների ընթացքում ավելացել են 28 %-ով: Կողմնորոշիչ համամասնություններ չեն սահմանվել, ինչի հետևանքով ծախսերի գերակշիռ մասը աշխատավարձի գծով ծախսերն են, որոնք 2013 թվականին կազմել են նախահաշվի 73,5 %-ը: Վերջին 5 տարիների ընթացքում նախահաշվի ընդհանուր ծախսերում աշխատավարձի գծով ծախսը ավելացել է 7 %-ով:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- ԵՊՀ-ն չի մշակել 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական բյուջե, ինչն ավելի իրատեսական կդարձնէր ռազմավարական նպատակների իրագործումը: Այս խնդրին անդրադարձել են նաև արտասահմանցի փորձագետները 2012-2014 թթ. ընթացքում իրականացված ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում:
- Ֆինանսական ռեսուրսների կառավարման օպերատիվությանը և ֆինանսական պլանավորման համակարգի զարգացմանը էապես խոչընդոտել է ՀՀ կառավարության 2011 թվականի N 168-Ն որո-

շումը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների վերաբերյալ:

- Համալսարանը չի ներդրել ռիսկերի կառավարման ամբողջական համակարգ, ինչի համար անհրաժեշտ են ֆինանսանյութական և մարդկային ռեսուրսներ:

Խնդիր VIII. դ) Բարձրացնել ֆինանսական ռեսուրսների կառավարման և օգտագործման արդյունավետությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Ֆինանսական բաժնում ներդրվել են տեղեկատվական ցանցային համակարգեր (ծրագրեր)՝ հաշվառումը արագացնելու և հեշտացնելու, նյութական արժեքների հաշվառման գործընթացը բարելավելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան վերագնահատվել են ԵՊՀ շենքերի և այլ հիմնական միջոցների արժեքները: Գրքերի հաշվառման նպատակով գրադարանում ներդրվել է «Ալեֆ» ծրագիրը, որով շարունակվում է գրքերի մուտքագրման գործընթացը: Ուսանողների և վարձավճարների հաշվառման նպատակով ներդրվում է նոր ցանցային համակարգ, որը կօգտագործվի ոչ միայն ֆինանսական բաժնում, այլ նաև ֆակուլտետներում:
- Վարչական, սպասարկող և տեխնիկական անձնակազմի թիվը վերջին 5 տարիների ընթացքում գրեթե չի փոփոխվել: Այն կազմում է ընդհանուր անձնակազմի թվի 31-33 %-ը: Մակայն վերջին 5 տարիների ընթացքում վարչական, սպասարկող և տեխնիկական անձնակազմի կողմից մատուցվող ծառայությունների ծավալները ավելացել են:
- Վերջին 5 տարիների ընթացքում կատարվել են տեխնիկական և կազմակերպչական աշխատանքներ ռեսուրսախնայողության ուղղությամբ: Մասնավորապես վերանորոգվել և շահագործման է հանձնվել մասնաշենքերի **ջեռուցման համակարգը, վերակառուց-**

վել է ջրամատակարարման համակարգը: 2012 թվականի վերջին կատարվել են աշխատանքներ գազասպառման խնայողության համար:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Համալսարանում չի ձևավորվել ներքին աուդիտի համակարգ:
- Ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգ ներդրված չէ: Համալսարանում դեռևս անբավարար են գործում մշակված նորմատիվներ և քաղաքականություն ռեսուրսախնայողության ուղղությամբ:
- Աշխատակիցների ծառայությունների արդյունավետությունը գնահատելու և նման կարգ ներդնելու հետ կապված ընթացքի մեջ է աշխատակիցների աշխատանքային անձնագրերի ստեղծումը, իսկ վերջնական արդյունքի խրախուսման մեխանիզմներ դեռևս առկա չեն:
- Ֆինանսական բաժնի անձնակազմի վերապատրաստումներ, փոքր բացառությամբ, չեն իրականացվել:

Խնդիր VIII. ե) Բարձրացնել Համալսարանի կառավարման արդյունավետությունը՝ զարգացնելով կառավարման ապակենտրոնացումը և հաշվետվողականությունը, ապահովել կառավարման տեղեկատվական համակարգերի ընդլայնված կիրառությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Կառավարման համահամալսարանական և ֆակուլտետային մակարդակներում լիազորությունները և պատասխանատվությունը հստակ բաշխվել են ինչպես նախորդ, այնպես էլ նոր ընթացակարգերում և կանոնակարգերում:

- Կազմվել և հրատարակվել է Համալսարանի ԳԱՑ-երի երրորդ լրակագր՝ 2008-2013 թվականների համար: Գնահատվել են Համալսարանի գործունեության 7 հիմնական ոլորտները՝ 78 ցուցանիշներով: 2014 թվականին լույս է տեսել ԳԱՑ-երի նաև անգլերեն տարբերակը, ինչը ցուցանիշների լրակագրը ավելի հասանելի է դարձրել միջազգային տարբեր գործընկերներին՝ Համալսարանի գործունեությունը գնահատելու համար:
- Կատարելագործվել է ուսանողների «SuperVision» տվյալների բազան: Ստեղծվել են մի շարք նոր տեղեկատվական համակարգեր, մասնավորապես որակի ապահովման և հաշվապահության աշխատանքները դյուրացնելու նպատակով: Ներմուծվել է էլեկտրոնային գույքագրման համակարգ: Կատարելագործվել են ներքին ցանցն ու սերվերային համակարգը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Համալսարանի ֆինանսական և կադրային բնագավառներում անբավարար են ներմուծվել ժամանակակից մենեջմենթի մեթոդներ, և տվյալ ոլորտների ղեկավար ու վարչակառավարչական կազմը մեծամասամբ չի անցել վերապատրաստում:
- Համալսարանի կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգ չի ձևավորվել, քանզի որոշ համակարգեր դեռևս մշակված չեն: Երբեմն լինում են տեղեկատվական համակարգերի մշակման նախաձեռնություններ, որոնք, սակայն, կանխավ չեն նախագծվում կառավարման գլոբալ համակարգի համատեքստում:

Խնդիր VIII. գ) Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել ուսանողների մասնակցությունը Համալսարանի կառավարմանը, հզորացնել համալսարանում գործող ուսանողական կազմակերպությունները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Ուսանողների ներգրավվածությունը Համալսարանի կառավարման մարմիններում ընդլայնվել է: 2011 թվականին հաստատված ԵՊՀ նոր կանոնադրության համաձայն՝ Համալսարանի խորհրդում և գիտական խորհրդում ուսանողների ներգրավվածությունը հասել է 25 %-ի:
- Ուսանողական կազմակերպությունների գործունեության համար ստեղծվել են նպաստավոր պայմաններ: Մասնավորապես՝ ընդլայնվել է նրանց տրամադրված գրասենյակների տարածքը, և ավելացվել են ծրագրերի իրականացման համար հատկացվող ֆինանսական միջոցները:
- Ուսանողական խորհրդի անդամները ներգրավվել են Համալսարանի հիմնական գործընթացներում, ինչպես օրինակ՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրմանը, որպես աշխատանքային խմբերի անդամներ: Ուսանողական խորհրդի անդամները մասնակցել են Համալսարանի ընթացիկ կառուցվածքային, ծրագրային և կազմակերպական փոփոխությունների պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներին՝ համապատասխան հանձնաժողովներում ներգրավվածության շնորհիվ:
- ԵՊՀ ուսանողական կառույցները կազմակերպել և մասնակցել են մի շարք գիտաժողովների և միջոցառումների՝ միջազգային, հանրապետական և համահամալսարանական մակարդակով: Ստորագրվել են համագործակցության համաձայնագրեր տեղական և արտաքին ուսանողական կառույցների հետ:
- Ուսանողների շրջանում իրականացվել են բազմաթիվ իրազեկող միջոցառումներ նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

- Ուսանողների համար կազմակերպվել են բազմաթիվ հանդիպումներ մշակույթի ու սպորտի տարբեր ներկայացուցիչների հետ: Ուսանողների հոգևոր զարգացմանը նպաստել են տարբեր ճանաչողական այցերը դեպի Հայաստանի հոգևոր-մշակութային վայրեր:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Համալսարանի կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողները չեն անցել համապատասխան վերապատրաստում՝ ուղղված համալսարանական կառավարմանը նրանց ընդգրկվածության արդյունավետությունը բարձրացնելուն:
- Միջազգային կազմակերպություններում և ծրագրերում համալսարանի ուսանողական կառույցների ներգրավման մակարդակը թերևս ցածր է:

Խնդիր VIII. է) Նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, նպաստել Համալսարանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հետագա զարգացմանը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Ստեղծվել է հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողով, որն ընդունել և իրականացրել է «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների» երկու ծրագիր՝ համապատասխանաբար 2011-2012 թթ. և 2013-2014 թթ.ի համար: Այդ ծրագրերն ուղղված են Համալսարանի դասախոսների և ուսանողների շրջանում կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը և նրանց համապատասխան գիտելիքներով զինմանը:
- Համալսարանում իրականացված «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների» երկու ծրագրերը ներառում են մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մեխանիզմները կատա-

րելագործելուն և Համալսարանի բոլոր ստորաբաժանումների գործունեության թափանցիկությունը ապահովելուն: Միջոցառումների թվում են ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, Համալսարանում իրականացվող ընդունելության գործընթացի վերահսկողությունը, Համալսարանում կառավարման գործընթացի կատարելագործումը և այլն:

- Դասախոսների, վարչական և ուսումնասօժանդակ կազմի ընտրության և առաջխաղացման մեխանիզմների անաչառությունն ու թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Առանձնակի ուշադրություն է դարձվել ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքներին, որոնք այնուհետև տրամադրվել են ֆակուլտետներին՝ քննարկման և համապատասխան միջոցառումների և առաջարկությունների մշակման նպատակով: Ուսանողական հարցումների արդյունքներն օգտագործվում են նաև դասախոսների պաշտոնավարման և առաջխաղացման համար անցկացվող մրցույթներում: Վերոհիշյալ հարցումների համակարգը հանդիսանում է նաև ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների կարևորագույն բաղադրիչը և էապես նպաստում է համալսարանում կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացներին:
- Մշակվել և կիրարկվում են ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև ուսումնական գործընթացի վերահսկելիությունը բարձրացնող մեխանիզմներ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա է հետևյալ բացթողումը.

- Հակակոռուպցիոն պայքարի արդյունավետության բարձրացմանը խանգարում է Համալսարանի որոշ աշխատակիցների և ուսանողների՝ բարձրագույն կրթության ոլորտում օրենսդրության և ԵՊՀ ներքին իրավական ակտերի իմացության ցածր մակարդակը:

IX. Ռազմավարական գործակցություն և միջազգայնացում

Ապահովել Համալսարանի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, ամրապնդել գործակցային կապերը աշխատաշուկայի հետ, խթանել ԵՊՀ գործունեության միջազգայնացումը:

Այս նպատակի իրագործման համար սահմանված երկու խնդիրներից յուրաքանչյուրի ուղղությամբ 2010-2014 թթ. կատարվել են համապատասխան աշխատանքներ, որոնք ներկայացվում են ստորև:

Խնդիր IX. ա) Ստեղծել երկարաժամկետ համագործակցային կապեր Համալսարանի հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- Ստեղծվել է ԵՊՀ գիտական խորհրդին կից ձեռնարկությունների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողով, որի հիմնական նպատակն է համակարգել համալսարանի տարբեր ստորաբաժանումների ձեռնարկությունների հետ փոխգործակցությանն ուղղված աշխատանքները, ապահովել վերոնշյալ աշխատանքների շարունակականությունն ու արդյունավետությունը: Հանձնաժողովի ներկայացմամբ ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատվել է ԵՊՀ ձեռնարկությունների հետ համագործակցության ռազմավարությունը և ձեռնարկությունների հետ ֆակուլտետի համագործակցության խորհրդի կանոնակարգը: Համաձայն վերոհիշյալ ռազմավարության՝ ԵՊՀ ֆակուլտետները հանդիսանում են ձեռնարկությունների հետ անմիջական համագործակցություն իրականացնող հիմնական օղակներ:
- Համալսարան-ձեռնարկություն փոխգործակցության ընդլայնման շրջանակներում՝ 2010-2014 թթ. ընթացքում կազմակերպվել են մի շարք կոնֆերանսներ և գիտագործնական հանդիպումներ, որոնց մասնակցել են պետական մարմինների ներկայացուցիչներ, աշ-

խատաշուկայում ակտիվ դերակատարություն ունեցող ձեռնարկությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Ընդլայնվել է գործընկեր կազմակերպությունների և ձեռնարկությունների դաշտը: Գործընկերների աջակցությամբ բարելավվել է ուսումնական ենթակառուցվածքը:

- ԵՊՀ նախաձեռնությամբ հայաստանյան 9 առաջատար բուհերի կարիերայի հարցերը համակարգող կառույցների միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր: Համագործակցության հիմնական շրջանակներն են՝ ամենամյա հանրապետական միջբուհական աշխատանքի տոնավաճառի կազմակերպումը, գիտաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների իրականացումը, տեղեկատվության փոխանակումը և այլ ծրագրերի իրականացումը: 2014 թ. նոյեմբերի 19-ին տեղի ունեցավ «Բուհից աշխատաշուկա՝ 1 քայլ» միջբուհական առաջին տոնավաճառը, որին մասնակցեցին ավելի քան 105 կազմակերպություններ:
- Ձեռնարկությունների հետ ձևավորված համագործակցության շրջանակներում 2010-2014 թթ. պարբերաբար կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ մի քանի տասնյակ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնք ԵՊՀ ուսանողներին ներկայացրել են աշխատաշուկայի արդի պահանջներն ու կարիքները:
- Շարունակվել են 2006/2007 ուստարում սկիզբ դրված ընթացիկ ուստարվա շրջանավարտների տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծման աշխատանքները: Հավաքագրված կոնտակտային էլ. փոստերի միջոցով համալսարանի ուսանողներին և շրջանավարտներին տրամադրվել է կարիերայի հնարավորությունների և թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն:
- Ստեղծվել է ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի պաշտոնական կայքէջ: Համապատասխան աշխատանքները խթանելու նպատակով ստեղծվել է նաև ձեռնարկությունների հետ համագործակցության պորտալ: ԵՊՀ տարբեր տարիների շրջանավարտների, ինչպես նաև ուսանողների հետ հետադարձ կապ

ապահովելու նպատակով ստեղծվել է նաև շրջանավարտների և կարիերայի կենտրոնի պաշտոնական էջը Ֆեյսբուք սոցիալական ցանցում: Եվրոպական միության ֆինանսավորմամբ «HEN GEAR» ծրագրի միջոցներով ստեղծվել է շրջանավարտների զբաղվածության պորտալ, որը կդառնա համալսարան-շրջանավարտ-գործատու անմիջական կապի ապահովման և վիճակագրական տվյալների ձեռքբերման արդյունավետ գործիք (աշխատանքները կավարտվեն 2015 թվականին):

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ ամբողջական վիճակագրական բազա ձևավորված չէ:
- Մի շարք ֆակուլտետների փոխգործակցությունը ձեռնարկությունների հետ չի բավարարում արդի պահանջները:

Խնդիր IX. Բ) Ընդլայնել և բազմազանեցնել Համալսարանի միջազգային կապերը, խթանել կրթական և գիտական ոլորտներում համագործակցությունը եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

- 2010-2014 թթ. զգալիորեն ընդլայնվել է Երևանի պետական համալսարանի միջազգային համագործակցության դաշտը: Այսպես, եթե 2010/2011 ուստարում համալսարանը համագործակցում էր 187 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ, ապա 2013/2014 ուստարում դրանց թիվը հասել է 233-ի: Աճել է նաև վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողների փոխայցելությունների թիվը՝ հասնելով 555-ի:
- Համալսարանի միջազգային համագործակցության աճին նպաստել են «Էրազմուս Մունդուս» ծրագրի շրջանակում իրականացվող

փոխանակման ծրագրերը, որին մասնակցում են ԵՊՀ մի շարք ֆակուլտետների սովորողներ և աշխատողներ: Համալսարանում փոխանակման ծրագրերի վերաբերյալ տեղեկացվածության աճին և դրանցում ընդգրկվածության ընդլայնմանը նպաստել են ԵՊՀ մի շարք ֆակուլտետներում (իրավագիտության, միջազգային հարաբերությունների, տնտեսագիտության, աշխարհագրության և երկրաբանության, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, ռուս բանասիրության) ստեղծված միջազգային կապերի գծով պատասխանատու մարմինները: Համալսարանի միջազգային համագործակցության, դրամաշնորհների ձեռքբերման, դրանց դիմելու մասին տեղեկատվություն և օժանդակություն համալսարանականները ստանում են ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության, գիտակազմակերպական բաժնի, ինչպես նաև ԵՊՀ կայքի միջոցով: Համալսարանի միջազգային համագործակցության խթանմանը նպաստել է նաև ԵՊՀ-ում 2009-2012 թթ. իրականացված «Տեմպուս» ծրագրի «Միջազգայնացման կառավարման որակի ապահովման գործիքներ» (QATMI) նախագիծը, որի նպատակն էր մշակել համալսարանի միջազգայնացման գործողությունների պլանը՝ ելնելով միջազգայնորեն ընդունված չափանիշներից:

- Համալսարանի մասնագետները հանրապետական մակարդակով ակտիվորեն մասնակցում են միջազգայնացման խնդիրներով զբաղվող տարբեր աշխատանքային խմբերի գործունեությանը: Համալսարանն առաջնորդվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված «Բոլոնիայի գործընթացը 2020 թ.՝ բարձրագույն կրթության եվրոպական տարածաշրջանը նոր տասնամյակում» ծրագրով:
- ԵՊՀ-ն հայաստանյան առաջին բուհն է, որ իրականացրել է համատեղ մագիստրոսական ծրագրեր Ռոստոկի համալսարանի («Վիզուալ հաշվարկ» մագիստրոսական կրթական ծրագիր՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ մասնագիտությամբ), «ԱՊՀ երկրների Ցանցային համալսարան» ծրագրի շրջանակում Ուրալի դաշնային համալսարանի՝ ՄԲՓՄ (ինֆորմատիկա և կիրառական մա-

թեմատիկա մասնագիտությամբ), Ազգերի բարեկամության ռուսաստանյան համալսարանի՝ РУДН (ռուս բանասիրություն, տնտեսագիտություն, կառավարում, միջազգային հարաբերություններ, իրավագիտություն, տուրիզմ մասնագիտություններով), Մոսկվայի՝ Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի՝ МГИМО (միջազգային հարաբերություններ, իրավագիտություն մասնագիտություններով), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի (ռուս բանասիրություն մասնագիտությամբ) հետ: Ռոստոկի համալսարանի հետ իրականացվող ծրագրի շրջանակում ունեցել ենք 14 շրջանավարտ, իսկ «ԱՊՀ երկրների Ցանցային համալսարան» ծրագրի շրջանակում՝ 29 շրջանավարտ:

- ԵՊՀ-ի և արտասահմանյան համալսարանների, ինչպես նաև ՀՀ-ում տարբեր երկրների դեսպանատների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում Համալսարանում դասավանդում են օտարերկրյա դասախոսներ՝ ռուս բանասիրության, ռոմանագերմանական բանասիրության, արևելագիտության, պատմության, ֆիզիկայի, աստվածաբանության և այլ ֆակուլտետներում: Հրավիրվում են նաև արտասահմանցի մասնագետներ՝ կարճաժամկետ դասախոսություններ կարդալու նպատակով: ԵՊՀ-ում կազմակերպվում են վերապատրաստման ծրագրեր՝ համագործակցող բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի համար, և հատուկ դասընթացներ՝ օտարերկրյա ուսանողների համար: Այսպես, չինացի ուսանողները ռուսաց լեզվի դասընթացներ են անցնում ռուս բանասիրության ֆակուլտետում: Հատուկ դասընթացներ են կազմակերպվում նաև ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնում:
- Արտասահմանյան առաջատար բուհերի ու գիտակրթական կենտրոնների հետ համագործակցության շրջանակում հիմնվել են Կայուն զարգացման, Գենդերային հետազոտությունների և առաջնորդության, Ղազախերենի, դազախական մշակույթի ու պատմության, Հնդկական ՏՏՏ գերազանցության, Կիրառական կենսաբանության գերազանցության, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնները: ԵՊՀ-ն Համալսարանների միջազգային ընկե-

րակցության (IUA), Եվրոպական համալսարանների ընկերակցության (EUA), Եվրասիական համալսարանների ընկերակցության (EUA), Սնձովյան երկրների համալսարանների ցանցի ընկերակցության (BSUN) և Համալսարանների ղեկավարների միջազգային ընկերակցության (IAUP) լիիրավ անդամ է, Ֆրանկոֆոն համալսարանների միջազգային ասոցիացիայի անդամ (AUF), Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի կազմակերպության համալսարանական լիգայի անդամ (CSTO University League):

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Չնայած ԵՊՀ-ն ակտիվորեն մասնակցում է ՀՀ-ում իրագործվող համակարգային և ինստիտուցիոնալ բարեփոխումներին, սակայն Համալսարանի դեռևս ոչ բոլոր ստորաբաժանումներն են լիարժեք ընդգրկված այդ գործընթացում: Համալսարանի միջազգայնացմանը չեն նպաստում նաև ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության մասին գործող օրենսդրությունը (համատեղ կամ կրկնակի դիպլոմային ծրագրերի իրականացման համար) և համապատասխան ֆինանսական միջոցների պակասը: Համալսարանում բացակայում է նաև միջազգայնացման ռազմավարության ֆորմալիզացված փաստաթուղթ: